




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՎՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ



(Լրամշակված տարբերակ)

Պատվիրատու՝

«Երևաննախագիծ» ՓԲԸ տնօրեն

Ս. Օհանյան

Կատարող՝

«Թրիգգեր» ՍՊԸ տնօրեն



Ա. Պեպանյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ.....	4
ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	5
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	9
1.1 Զովունի բնակավայրի հիմնական սոցիալտնտեսական և հատակագծային բնութագրերը.....	9
1.2 Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն.....	14
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	16
2.1 Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմաններ.....	16
2.1.1 Տարածքի ուսումնասիրվածությունը.....	16
2.1.2 Ֆիզիկա-աշխարհագրական և տեխնաձին պայմանները.....	16
2.1.3. Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները.....	17
2.1.4. Տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները.....	18
2.1.5. Երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը.....	19
2.1.6 Աշխատանքների արդյունքները.....	22
2.2 Լանդշաֆտ.....	24
2.3. Օդերևութաբանակլիմայական պայմանները.....	25
2.4 Մթնոլորտային օդը.....	31
2.5 Աղմուկի մակարդակը.....	34
2.6 Հողերի բնութագիրը.....	35
2.7 Մակերևութային և ստորերկրյա ջրահոսքեր.....	37
2.8 Բուսական և կենդանական աշխարհի նկարագրություն.....	39
2.9 Պահպանվող տարածքներ.....	44
3. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ.....	45
4. ՀԱՏԱԿԱԳԾՍԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ.....	49
5. ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	59
6. ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	79
6.1 Զրամատակարարում.....	79

6.2. Զրահեռացման ցանց	80
6.3 Տարածքի բնութագիրը մակերևութային և ստորգետնյա ջրերի իրավիճակով	81
6.4 Զրային ռեսուրսների պահպանություն	81
6.5. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանություն	82
6.6. Կենցաղային կոյուղի	82
6.7 Հեղեղատար կոյուղի	83
6.8 Էլեկտրամատակարարում	85
6.9. Գազամատակարարում	87
6.10 Ջերմամատակարարում	90
6.11. Ճանապարհային հաղորդակցուղիների ցանց և կարգավորող գծեր.....	92
7. ԻՆՇԵՆԵՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՏԱՐԵՐԱՑԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՑ	93
7.1. Մակերեսային հակաջրոդոդումային միջոցառումներ	93
7.2 Հականստվածքային միջոցառումներ.....	94
7.3 Խախտված հողերի վերականգնում.....	95
7.4. Հակասելավային, հակադեֆլյուկցիոն, հակաջրհեղեղային կառուցվածքներ և միջոցառումներ.....	95
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱՑԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	96
8.1 Մթնոլորտային օդ	96
8.2 Թափոններ.....	99
8.3 Հողային ռեսուրսների պահպանություն.....	100
8.4 Աղմուկի մակարդակը	101
8.5 Կանաչապատման համակարգը	102
8.6. Զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները	107
Եզրակացություն	115

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի հետագա զարգացման տեսլականից ելնելով՝ բնակավայրին անհրաժեշտ է Զովունի բնակավայրի գլխավոր հատակագիծ՝ քաղաքաշինական հստակ սահմանված չափորոշիչներով, ոճային առանձնահատուկ ուղղություններով, կոմունալ ենթակառուցվածքների հետագա բարեփոխման կարիքների նկատառումներով և այլն, ինչը կնպաստի համայնքի քաղաքաշինական կանոնակարգված զարգացմանը:

Նախագծի նպատակն է մշակել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի (այսուհետ՝ նախագիծ), որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ բնակավայրի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Սույն նախագիծը հանդիսանում է իրական քաղաքաշինական ձևափոխումների մակարդակ, որտեղ մի կողմից իրականացվում են բնակավայրի գլխավոր հատակագծում նախատեսված շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ հիմնական դրույթները, մյուս կողմից ձևավորվում է կոնկրետ քաղաքաշինական իրադրություն լուրջ Էկոլոգիական, բնական բնութագրերով և սանիտարահիգիենիկ պայմաններով:

Նախագծի շրջանակներում «Շրջակա միջավայրի պահպանումը բաժնի մշակման նպատակը հանդիսանում է շրջակա միջավայրի պահպանության հարցերի գերակայության ապահովումը, բնօգտագործման արդյունավետությունը, բնակչության կենսագործունեության Էկոլոգիական անվտանգ միջավայրի ձևավորումը և առողջության պաշտպանումը:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի նախագծի/պայմանագիր N ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/24 առ 2021թ./ աշխատանքները կատարվել են Նաիրի համայնքի պատվերով:

- N ԿՄԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/24 առ 2021թ. պետական գնման պայմանագիր:
- ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի (բնակավայրի) գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանք:

Նախագծման համար ուղեցույց են ծառայել հետևյալ իրավանորմատիվային ակտերը և նախագծային փաստաթղթերը.

- «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը /2001 թ. /,
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, (ընդունված է 2014թ-ի հունիսի 21-ին, ՀՕ-110-Ն),
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1920-Ն որոշում (փոփոխված 28.04.2022, N 597 որոշմամբ),
- ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N385- որոշում:

- ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները,
- ՀՀ կառավարության N 443-Ն առ 24.05.2005թ. որոշմամբ հաստատված «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի մշակած Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հայեցակարգը,
- ՀՀ կառավարության N 2330-Ն որոշմամբ (15.12.2005թ) հաստատված «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի մշակած Երևան քաղաքի գլխավոր հատակագծի (2005-2020թթ) նախագիծը,
- Պատմության և մշակույթի հուշարձաններ բաժնի մշակման համար հիմք է հանդիսացել 2003թ. Դեկտեմբերի 24-ին հաստատված ՀՀ Կոտայքի մարզի պատմության ու մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը /N1793 N/:

Նախագծում հաշվի են առնված նաև «ՍԵՄԱԹ» -ի Եվրոպական մայրցամաքի կայուն զարգացման հիմնադրային սկզբունքների, «Օրհուսի կոնվենցիայի, Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի», «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի» և այլ փաստաթղթերի միջոցառումներն ու սկզբունքները:

Նախագծի մշակման հիմնական նպատակը տարածքի հեռանկարային տնտեսական զարգացման և տարածքային աճի ուղղությունների, տարածքների գործառնական նշանակության որոշումն է՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական լայն համալիրի կիրառումով, տարածքների հողօգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.),
- «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.,
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության <<ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության <<ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 72-Ն որոշում,

- ՀՀ Կառավարության «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում,
- <<ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին>> ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում,
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- Հաշվի են առնվել նաև՝
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում
- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Զովունի՝ բնակավայր ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքում:
Սահմանակից է Երևան քաղաքին:

Ընդհանուր տեղեկություններ Զովունի գյուղի վերաբերյալ

- Բնակավայրի տարածքի մակերեսը՝ 13.89 քառ.կմ:
- Բնակչության թիվը՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 6247 մարդ:
- Բնակչության կազմը՝ հայեր, եզդիներ:
- Օգտակար հանածոներ՝ չկան:
- Կրթական հաստատություններ՝ միջնակարգ դպրոց, մուր-մանկապարտեզ:
- Մշակութային հաստատություններ՝ արվեստի դպրոց, մշակութային տուն, հուշարձան համալիր կից թանգարանով:
- Մարզական հաստատություններ՝ չկան:
- Արտադրական ձեռնարկություններ՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ, «Ույուտ» արտադրական կոոպերատիվ, «Նորմա կաթ» ՍՊԸ, «Նաիրիի բերրիություն» ՍՊԸ, «Թամարա և Անի» ՍՊԸ, «Ունիվերսալ» ՍՊԸ, «Ազրոհիմպուլս» ՍՊԸ:
- Բնակչության հիմնական զբաղմունքը՝ անասնապահություն, գյուղատնտեսություն:
- Հոգևոր կառույցներ՝ չկան:

1.1 Զովունի բնակավայրի հիմնական սոցիալտնտեսական և հատակագծային բնութագրերը

Զովունի բնակավայրը, որը գտնվում էր Ապարանի շրջանում, հիմնադրվել էր 1828թ.: Գյուղի պատմական անվանումները՝ Սոլլաղասում, Ծառաշեն:

Ապարանի ջրամբարի կառուցման ժամանակ՝ 1965-1967 թթ-ին, ամբողջովին վերաբնակեցվեց Երևան քաղաքի Շահումյանի շրջանի վարչական տարածքում գտնվող Ամո գյուղին կից տարածքում, և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1972 թ. ապրիլի 4-ի հրամանագրով վերանվանվեց Զովունի, իսկ գյուղը մտավ Նաիրիի շրջանի

կազմի մեջ: Վերաբնակեցված ընտանիքների մի փոքր մաս բնակություն են հաստատել Երևանում՝ հիմնականում ներկայիս Աջափնյակ վարչական տարածքում:

Վերաբնակեցումից առաջ 1959 թվականի տվյալներով Ապարանի Զովունի գյուղը ունեցել է 711 բնակիչ, իսկ նոր Զովունիում 1975 թվականի տվյալներով արդեն 2555 մարդ, ներառյալ այնտեղ բնակվող եզդիական թաղամասի բնակչությունը:

Վերաբնակեցումից հետո տարբեր ժամանակահատվածներում (առավելապես Խորհրդային Միության տարիներին) գյուղում սկսվեցին կառուցվել բնակելի տներ, խանութներ, դպրոց, մանկապարտեզ, բուժ. ամբուլատորիա, մեքենա-տրակտորային հավաքակայան իր արհեստանոցներով, մշակույթի տուն, վարչական շենքեր և այլն: Փողոցները ասֆալտապատվեցին, մայթեզրերին տնկվեցին դեկորատիվ ծառեր, գյուղը ունեցավ խմելու և ոռոգման ջրի կարգավորող գործող ցանց, գյուղի փողոցներում կար գիշերային լուսավորվածություն: Զովունի-Եղվարդ ընկած հատվածում հիմնվեցին խաղողի և պտղատու այգիներ: Կառուցվեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված Զովունցիների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթող և գյուղի պատմությանը նվիրված թանգարանը:

Զովունի գյուղի վարչական տարածքում է գտնվում «Կարմիր բերդ» կոչվող պատմամշակութային հուշարձանը, այն թվագրվում է միջին բրոնզից մինչև վաղ միջնադար, իսկ հայտնաբերված խեցեղենի նմուշները՝ 2-րդ-1-ին հազարամյակներ, տարածքում պահպանվել են 7-րդ դ. բերդի ավերակները, Դրան հարող տարածքով (Հրազդանի կիրճում) հոսում է Հրազդան գետը: Գյուղի արևելյան եզրին կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակներին թվագրվող կիկլոպյան ամրոց, իսկ ընդհանուր առմամբ գյուղում կա ՀՀ կառավարության կողմից հաստատված 24 հուշարձան:

Զովունի բնակավայրը գտնվում է Երևան քաղաքի հյուսիսարևմտյան հատվածում (Դավթաշեն վարչական շրջանի սահմանին), մայրաքաղաքից 1կմ, իսկ մարզկենտրոն Հրազդան քաղաքից, մոտ 55 կմ հեռավորության վրա: Սահմանակից է նաև Եղվարդ, Քանաքեռավան, Քասախ և Մրգաշեն համայնքներին:

Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -24 -26°C, երբեմն այն հասնում է մինչև -33°C: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 35-40°C: Ծովի մակերևույթից բարձր է միջին հաշվով 1100 մ, տաք օրերի թիվը տարվա մեջ 200 օր է: Տեղումները՝ տարեկան 476 մմ:

Ոռոգման ջուրը ստանում է Արզնի-Շամիրամ ջրանցքով, իսկ խմելու ջուրը ապահովվում է Արզնի-Երևան ջրատարով:

2019 թվականին փոխվել է խմելու ջրի մայր խողովակաշարը:

2021 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ «Մագնոլիա-Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ներդրումային ծրագրով նախատեսվում է կառուցել բնակելի թաղամաս, ներդրումների չափը կազմելու է մոտ 11.9 մլրդ դրամ:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ի ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Եղվարդ, Արագյուղ, Բուժական, Զովունի, Զորավան, Սարալանջ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Եղվարդ համայնքը:

Այնուհետ, Զովունին ընդգրկվել է Նաիրի համայնքի մեջ, որը ձևավորվել է 2021 թ-ին համայնքների խոշորացման շրջանակում՝ նախկին Եղվարդ համայնքին միավորելով Կոտայքի մարզի Պռոշյան ու Քասախ գյուղական համայնքները:

Բնակավայրի հիմնական բնութագիրը՝

- Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը՝ 1389.86 հա:
- Բնակչության թիվը՝ 6247 մարդ:
- Հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝
 - **բնակավայրի հողեր**՝ 264.17 հա, այդ թվում՝
 - ✓ բնակելի կառուցապատման հողեր, այդ թվում տնամերձ 179.97 հա,
 - ✓ հասարակական կառուցապատման հողեր՝ 14.68 հա,
 - ✓ ընդհանուր օգտագործման հողեր՝ 35.05 հա,
 - ✓ խառը կառուցապատում՝ 0.80 հա,
 - ✓ այլ հողեր՝ 33.67 հա:

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1016.36 հա, այդ թվում՝
 - ✓ վարելահողեր՝ 534.10 հա,
 - ✓ պտղատու այգիներ՝ 82.89 հա,
 - ✓ խաղողի այգիներ՝ 1.28 հա,
 - ✓ արոտ՝ 141.37 հա,
 - ✓ այլ հողատեսքեր՝ 256.72 հա:
 - Արդյունաբերական, ընդերքօգտագործման, այլ արտադրական նշանակության, գյուղական արտադրության օբյեկտների հողեր՝ 36.76 հա,
 - Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 10.72 հա,
 - Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 38.16 հա, (այդ թվում՝ պատմական և մշակութային հողեր՝ 26.14 հա, այդ թվում՝
- ✓ գերեզմանոց 9.21:
 - Առողջարարական հողեր՝ - հա,
 - Հանգստի հողեր՝ - հա,
 - Բնապահպանական՝ - 2.81 հա,
 - Հատուկ նշանակության հողեր՝ - 20.0 հա,
 - Անտառային հողեր՝ - հա,
 - Զբային հողեր՝ - 3.69 հա,
 - Պահուստային հողեր՝ - հա:

1.2 Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն

ՀՀ Կոտայքի մարզի Զովունի գյուղի պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ՝ հաստատված է ՀՀ Կառավարության 2007 թ.-ի մարտի 15-ի N 385-Ն որոշմամբ:

Աղյուսակ 1.2.1

Հուշարձանի համարը	Մեկուկես հարյուրամյա հուշարձանի ենթահամարը	Հուշարձանի անվանումը, հուշարձան	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը,	Ծանոթագրություն
1	2	4	5	6	7	8
1		ԱՄՐՈՑ ԿԱՐՄԻՐ ԲԵՐԴ	Ք.ա. 2 հազ.- միջնադար	գյուղի աե եզրին, հրվանդանի վրա	Հ	Թագաքենդ, Գայա խարաբա
	1.1	Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.	Ամրոցից հվ-ամ, գյուղի մեջ	Հ	բաղկացած է դամբարանաբլուրներից և կրոնիկներից
	1.2	Դոլմեն	Ք.ա. 14-13 դդ.	ամրոցից ամ, կիրճի եզրին	Հ	
	1.3	Միջնաբերդ	Ք.ա. 2 հազ.	ամրոցի աե մասում, հրվանդանի եզրին	Հ	Տարածքում կան բազմասենյակ մոնումենտալ կառույցներ
	1.4	Արձանագրություն սեպագիր	Ք.ա. 1 հազ.	պարսպի հս եզրին	Հ	Սեպագիր տառերը մեծ են և անընթեռնելի
	1.5	Ժայռապատկեր՝ «Օձ»	Ք.ա. 2 հազ.	ամրոցի հվ, հրվանդանի վրա	Հ	փորագրված է քարաբեկորի վրա
	1.6	Ժայռապատկեր՝ «Վիշապ»	Ք.ա. 2 հազ.	Ամրոցից կենտր. մասում	Հ	փորագրված է ժայռի վրա
2		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	11-17 դդ.	ամրոցի հս, Հրազդան գետի աջ ափին	Հ	Փոքր Մհեր կրթահամալիրի տարածքում
	2.1	ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	15-16 դդ.	գյուղատեղիից ամ	Տ	ավերված
		Դամբարան	15-16 դդ.	գերեզմանոցում	Տ	ավերված
		Տապանաքար	15-16 դդ.	դամբարանից	Հ	խոյակերպ, մեջքի վրա փոսիկներ
		Տապանաքար	15-16 դդ.		Հ	խոյակերպ, կտրված գլուխը տեղափոխվել է Փոքր Մհեր կրթահամալիր

		Տապանաքար	15-16 դդ.	Փոքր Մհեր կրթահամալիրի տարածքում	S	տուֆ, արձանագիր, քանդակագարդ, հատված
		Տապանաքար	15-16 դդ.	Փոքր Մհեր կրթահամալիրի տարածքում	S	տուֆ, ռելիեֆ վարդյակով
	2.2	Եկեղեցի	11 դդ.	գյուղատեղիի հվ-աւ եզրին	Հ	ավերված, կառուցված է բազալտե և սրբատաշ տուֆ քարերով
		Խաչքար	11-12 դդ.	Եկեղեցու հվ եզրին	Հ	բազալտ, տեղափոխվել է Փոքր Մհեր կրթահամալիր
		Խաչքար	13-14 դդ.	Եկեղեցու հվ եզրին	Հ	տուֆից, ստորին հատվածը
	2.3	Ճանապարհ	Ք.ա. 2 հազմիջնադար	Հրագրանի աջ ափին	Հ	երկու կողմից եզերված է քարաշար պատերով
3		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐ ՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1985 թ.	գյուղի հս-աւ մասում	S	քանդ. Հ. Իսահակյան, ճարտ. Հ. Ասլանյան
4		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	քարի դար	Եղվարդի կիրճի աջակողմյան կտրվածքում, ամրոցից հս-ամ	Հ	հայտնաբերվել են աշելյան գործիքներ
	4.1	Քարայր-կացարան «Զովունի-1»	քարի դար	գյուղից 2-3 կմ հս, Փոքր Մհեր կրթահամալիրի մոտ	Հ	
	4.2	Քարայր-կացարան «Համո-1»	քարի դար	գյուղի հս մասում, Եղվարդ գետի աջ ափին	Հ	
	4.3	Քարայր-կացարան «Համո-2»	քարի դար	գյուղի հս մասում, Եղվարդ գետի ձախ ափին	Հ	
	4.4	Քարայր-կացարան «Համո-3»	քարի դար	գյուղի հս մասում, Եղվարդ գետի ձախ ափին	Հ	

Ծանոթությազրություն: Զովունի գյուղի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների զբաղեցրած տարածքների և պահպանական գոտիների նախագծերը և դրանց օգտագործման պայմանակարգերը (ոչ հստակ և լրիվ կազմով) տրամադրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից: Այս ուղղությամբ հեղինակային խմբի անդամների կողմից տեղում կատարվել են լրացուցիչ ուսումնասիրություններ:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.

2.1 Ինժեներաերկրաբանական և սելյամատեկտոնական պայմաններ

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի տարածքի էլակետային նյութերի հավաքման հիման վրա կազմվել է 1:10000 մասշտաբի ինժեներաերկրաբանական շրջանացման քարտեզը: Հետազոտությունների ընդհանուր մակերեսը կազմում է 13.9 քառ.կմ:

Զովունի բնակավայրի տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները՝ համաձայն տեխնիկական առաջադրանքի, ներկայացված են գոյություն ունեցող արխիվային նյութերի հիման վրա:

2.1.1 Տարածքի ուսումնասիրվածությունը

«Հայնախագիծ» ինստիտուտի կողմից 1991թ.-ին կատարվել են ինժեներաերկրաբանական հետազոտություններ Երևան քաղաքի տարածքում, որը ընդգրկել է նաև Զովունի գյուղի տարածքը: Ուսումնասիրություններն իրենց մեջ ընդգրկել են ինժեներաերկրաբանական հանույթ, հորատանցքերի հորատում, դիտարկման կետերի նկարագրություն, գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների որոշում, տարածքի ինժեներաերկրաբանական շրջանացում:

Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել է Երևան քաղաքի ինժեներաերկրաբանական շրջանացման քարտեզը:

2.1.2 Ֆիզիկա-աշխարհագրական և տեխնածին պայմանները

Զովունի բնակավայրը գտնվում է Երևան քաղաքի հուսիսային մասում, Հրազդան գետի աջ ափին, Եղվարդի սարահարթի եզրամասում: Շրջանն ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով խիստ մայրցամաքային կլիմա, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 390C: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -330C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը

կազմում է 476մմ, գերակշռում են 3մ/վրկ արագության հյուսիսային և հյուսիսարևելյան ուղղության քամիները: Չյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 25սմ: Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 40սմ:

Տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում Եղվարդի, հրաբխային սարավանդի լանջերը և Հրազդան գետի կիրճը:

Հրազդան գետի հովտի աջ լանջերին տեղադրված է Եղվարդ-Քանաքեռի, հրաբխային սարավանդը: Գետահովտի լանջերը կազմված են բազալտային և անդեզիտա-բազալտային լավաներից, գառիթափ են և առանձին տեղերում ունեն 120–150մ խորությամբ կիրճի տեսք:

Կիրճի խորությունը հոսանքի ուղղությամբ դեպի ներքև փոքրանում է 150 մետրից մինչև 50 մետր, կապված հրաբխային սարավանդների բարձրության նվազման հետ:

Հրազդան գետի կիրճում հանդիպում են նաև էրոզիոն դարավանդներ, որոնք առաջացել են անդեզիտա-բազալտների մեջ, որոնց բարձրությունը գետի ջրի մակարդակից 50-70 մետր է:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևութային համատարած լվացումով մակերևութային տեղումներով:

Ուսումնասիրված տարածքում տեխնածին երևույթները բացակայում են:

2.1.3. Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները

Զովունի բնակավայրի տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են հիմնականում վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք ներկայացված են հրաբխային, հրաբխանստվածքային և նստվածքային ֆացիաներով:

Դրանք ներկայացված են տարբեր տեսակի ինժեներա-երկրաբանական հատկանիշներով օժտված, ամենափուխրից (ավազ, կավավազ) մինչև կիսաժայռային և ժայռային ապարներով: Ժայռային գրունտները՝ դոլերիտային բազալտներ, անդեզիտա-բազալտներ և տեղ-տեղ նրանց վրա տեղադրված

կիսաժայռային նստվածքներ՝ տուֆեր, առաձևանում են մեծ ամրությամբ, բայց ունեն տեղադրման տարբեր պայմաններ և դրանց հետ կապված ճեղքավորվածություն: Փուխր գրունտների կապակցված և չկապակցված տարատեսակները՝ կավեր, ավազակավեր, կավավազներ, ավազներ, գլաքարային, ճալաքարային նստվածքներ:

2.1.4. Տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները

Հետազոտվող տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները բարդ են, ինչը պայմանավորված է երկրաբանական կառուցվածքով, կուտակումային, էրոզիոն և դենուդացիոն երևույթներով, տարածամասնակ հրաբխային գործունեության ի հայտ գալով և նեոտեկտոնական պրոցեսներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է հիմնականում վերին պլիոցենի ժամանակներից, երբ սկսվել են հերթականությամբ տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական հասակի տարբեր նստվածքային և հրաբխային առաջացումներ:

Ինչպես նշվեց վերևում, գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանը բնութագրվում է ծագումնային տեսակների և ռելիեֆի տարբեր ձևերով: Կարելի է առանձնացնել ռելիեֆի մորֆոծագումնային հետևյալ ձևերը.

1. Հրաբխային (վերին պլիոցենի հասակի լավային ծածկոցներ, միջին և վերին չորրորդականի լավային հոսքեր):
2. Կուտակումային (այլուվիալ, այլուվիալ-պրոլյուվիալ):
 - Հրաբխային ռելիեֆը ներկայացված է Եղվարդի, սարավանդների լանջերով և Հրազդան գետի հովտի եզրամասով երկայնակի ձգվող չորրորդականի լավաների նեղ դարավանդային հոսքերով:
 - Կուտակումային ռելիեֆի ձևը ծագումնային տեսակետից ներկայացված է լճային, այլուվիալ, այլուվիալ-պրոլյուվիալ, մասամբ դելյուվիալ և էոլային տեսակներով: Այլուվիալ ձևերը կապված են Հրազդան գետի «աշխատանքի» հետ: Հրազդան գետի էրոզիոն գործունեության փոփոխման արդյունքում առաջացել են տարբեր դարավանդային մակարդակներ:

Ռելիեֆի ձևերից տարածքում առկա են տափարակները, սարահարթերի լանջերը և դարավանդները, էրոզիոն-հողմնահարման լանջերը:

Հետազոտվող տարածքում պայմանականորեն առանձնացվել են հետևյալ հիմնական գեոմորֆոլոգիական տարրերը.

Ա - Հրաբխային սարավանդների լանջեր (Եղվարդի սարահարթ):

Բ - Էրոզիոն-հողմնահարման լանջեր:

2.1.5. Երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը

Ուսումնասիրված տարածքի երկրաբանական կառուցվածքում, ըստ ծագման, կազմի և հասակի, մասնակցում են ամենաբազմազան համախմբերի ապարները՝ Վերին պլիոցենից մինչև անտրոպոգեն.

Տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը ներկայացված է.

Տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքում պայմանականորեն առանձնացվել են գրունտների հետևյալ շերտերը՝

Շերտ թիվ 1 Ավազ փոշենման և մանր, ապիտակա-մոխրագույն, սպիտակահողային կավավազի, երբեմն կոպճային գրունտի ենթաշերտերով և նրբաշերտերով, փուխր, սակավախոնավ և խոնավ: Հզորությունը տատանվում է մեծ սահմաններում՝ 1.0-6.0 մետր և ավել:

Շերտ թիվ 2 Կավավազ բաց և մուգ մոխրագույն, գորշավուն երանգով, պինդ և փափուկ պլաստիկ թանձրության մինչև 35% քարակտորների պարունակությամբ, փոշենման ավազի ենթաշերտերով հաճախակի կարբոնատային և աղային, տարածքում կավավազները ներկայացված են նաև գերնստող տարատեսակով: Հզորությունը տատանվում է 0.8-8.0 մետրի սահմաններում:

Շերտ թիվ 3 Կոպճային գրունտ, հազվադեպ մեծաբեկորներով, հրաբխանստվածքային ապարներից, միջին հղկվածության, կավավազային և տարահատիկ ավազների լցանյութով, ավազի նրբաշերտերով, ոսպնյակներով և բներով, տեղ-տեղ ցեմենտացած, լցանյութը՝ սակավախոնավ և խոնավ, հզորությունը տատանվում է 0.5-6.0 մետրի սահմաններում:

Շերտ թիվ 4 Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով: Հզորությունը տատանվում է 2.0-8.0 մետր և ավելի սամաններում: Չորրորդականի էյուվիալ-դեյուվիալ, դեյուվիալ-ալյուվիալ, էյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ:

Շերտ թիվ 5 Խճա-մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Շերտ թիվ 6 Բազալտ, անդեզիտաբազալտ մոխրագույն սև երանգով, ծակոտկեն, խոռոչային, ճեղքավորված, հողմնահարված, քայքայված, երբեմն մեծաբեկորների աստիճանի, հազվադեպ շեղջաքարացած, ամուր, արմատական տեղադրմամբ:

Շերտ թիվ 7 Սպիտակահող

Զովունի բնակավայրի տարածքում ստորգետնյա ջրերը կապված են հետևյալ երկրաբանական և մորֆո-կառուցվածքային տարրերի հետ:

1. Ջրեր, հրաբխային սարավանդների սահմաններում:
2. Հրազդան գետի հովտի ողողահունային առաջացումների ջրեր:

Հրաբխային սարահարթի սահմաններում գտնվող ջրերը կապված են ռելիեֆի ծածկված գետահովիտների և ռելիեֆի մյուս «բացասական» հին ձևերի հետ: Սարավանդի սահմաններում դրանք տեղադրված են 20.0-30.0 մետրից խորը: Այս ջրերը հիմնականում բեռնաթափվում են Հրազդան գետի հովտում:

Հրազդան գետի հովտային նստվածքների ջրերը լայն տարածում ունեն գետի կիրճի և հովտի հատակային մասում: Կախված Հրազդան գետի ժամանակակից երոզիոն գործունեության հետ ստորգետնյա այս տիպի ջրերի հորիզոնի խորությունը տարբեր է, միջինը 20.0 մ:

Տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները.

Կավային գրունտները (ավազակավ, կավ, կավավազ) ունեն լայն տարածում, առանձնապես տարածքի հարավ-արևելյան մասերում, այս գրունտներով ծածկված են բազալտային և տուֆային հոսքերը, ծածկոցները, հրաբխային սարավանդների սահմաններում, Հրազդան գետի ձորի լանջերի «հիմքային» մասերը: Այս գրունտների հզորությունը կախված է բազմաթիվ գործոններից և տատանվում է միավորից մինչև 10մ և ավելի: Ընդհանուր առմամբ այս գրունտները ոչ կայուն են: Այս գրունտներում առկա է կարբոնատային կեղևի շերտեր 0.5-ից մինչև 2.5 մետր, երբեմն ավելի հզորությամբ: Այս գրունտները աղայնացած են, դյուրահալ աղերի պարունակությունը կազմում է 0.1% մինչև 10%, միջին լուծելիության աղերի քանակը՝ 1.0-15%, դժվար լուծվող աղերի քանակը՝ 5-40%, ծակոտկենության գործակիցը կազմում է 0.4-1.12, ծավալային կշիռը 1.47-1.93 գ/սմ³, դրանք պլաստիկ թանձրության են, պլաստիկության թիվը հասնում է մինչև 10-ի: Հարաբերական «նստումը» տատանվում է 0.01-0.13սմ սահմաններում:

Մեծաբեկորային գրունտները ներկայացված են խճա-մանրախճային, մեծաբեկորախճային, ճալաքարա-կոպճային և գլաքարա-կոպճային տարատեսակներով: Այս նստվածքները մասնակցում են Հրազդան գետի հովտային, վերողողահունային դարավանդների և հունային առաջացումների գոյացմանը նրա ամբողջ երկարությամբ: Քարակտորները ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային, նստվածքային ապարներով, հատիկաչափական տեսակետից դրանք շատ բազմազան են ու բազմապիսի, ավազային և կավային գրունտների ենթաշերտերով, ոսպնյակներով, բներով, գրպաններով, ունեն անհամասեռ կազմ և չպահպանվող տարածում ու հզորություն:

Խոշորաբեկորային նստվածքները՝ խճա-մանրախճային և ճալաքարա-կոպճային, բնութագրվում են հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներով. խտությունը՝ 1.55-1.72գ/սմ³, ծակոտկենությունը՝ 43-45.4%, ծակոտկենության գործակիցը՝ 0.75-0.83, ներքին շփման անկյունը՝ 24-26°, շաղկապվածությունը՝ 1-2 ԿՊա, ձևախախտման մոդուլը տատանվում է 32-40ՄՊա սահմաններում, կավային լցանյութի դեպքում: Մեծաբեկորա-խճային և գլաքարա-ճալաքարային գրունտների


համար խտությունը կազմում է 1.9-2.0 գ/սմ³, լցանյութի համար ներքին շփման անկյունը կազմում է 25-27°, շաղկապվածությունը՝ 0.30ԿՊա:

Բազալտներ, անդեզիտա-բազալտներ՝ մուգ մոխրագույն, տեղ-տեղ վարդա-մոխրագույն գրունտներ, խարամացած, անհավասարաչափ, ծակոտկեն, տարբեր ամրության և ճեղքավորված, սյունաձև, սալիկային, մեծաբեկորային, գնդաձև և բրեկչիանման, մակերեսից (մինչև 3-5մ խորության) տարբեր աստիճանի հողմնահարված, հրաբխային խարամի և ավազի ենթաշերտերով, ոսպնյակներով, բներով, ընդգրկումներով: Դրանք մասնակցում են Եղվարդի հրաբխային սարավանդի, Հրազդանի հովտում, շատ տեղամասերում ծածկված են դեյուվիալ, էյուվիալ և դեյուվիալ-էյուվիալ առաջացումներով, 5.0-10.0մ հզորությամբ: Բազալտները, անդեզիտա-բազալտները ներկայացված են խիտ, մանրածակոտկեն և խոշորածակոտկեն տարատեսակներով, որոնք համապատասխանաբար բնութագրվում են հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներով (միջինացված). ծակոտկենությունը (%)՝ 8, 16.1, 19.7, տեսակարար կշիռը (գ/սմ³)՝ 2.91, 2.88, 2.86, խտությունը (գ/սմ³)՝ 2.66, 2.42, 2.31, ջրակլանումը (%)՝ 1.24, 2.49, 2.85, միաառանցք սեղմման դիմադրությունը (կգ/սմ²) չոր վիճակում՝ 1830, 1120, 601, ջրհագեցած վիճակում՝ 1320, 840, 482: Հրաբխային խարամներով զբաղեցրած տարածքը կազմում է մոտ 5-6 կմ², դրանք բեկորային են «փքված», խայտաբղետ են՝ կարմրից մինչև սև, մոխրագույն և այլն: Դրանց խտությունը տատանվում է լայն սահմաններում՝ 0.9-1.7գ/սմ³, ծակոտկենությունը՝ միջինը 58%:


2.1.6 Աշխատանքների արդյունքները

Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնույթից, ինչպես նաև հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից, ուսումնասիրվող տարածքում առանձնացվել են երեք ինժեներա-երկրաբանական շրջաններ՝ բարենպաստ, պայմանական բարենպաստ և անբարենպաստ:

Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել է ինժեներա-երկրաբանական շրջանացման 1:10000 մասշտաբի քարտեզը (գրաֆիկական հավելված 1):



Նկար 2.1.1 Ջովունի համայնքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզ



Նկար 2.1.2 Զովունի համայնքի տարածքի ինժեներաերկրաբանական շրջանցման քարտեզ

2.2 Լանդշաֆտ

Զովունու բնակավայրի տարածքն ընդգրկված է նախալեռնային բնական լանդշաֆտային գոտում: Գոտին հիմնականում մեղմ թեքությամբ ռելիեֆների տարածքում է, միայն բնակելի տների մի մասն են գտնվում համեմատաբար թեք ռելիեֆի վրա: Հիդրոերկրաբանական տեսակետից տեղանքում առկա են ճեղքային ջրերը: Գոտու հողատարածությունները կայունորեն օգտագործվում են, մասամբ ծածկված են նաև կերախոտերի ցանքերով:

Հաշվի առնելով համայնքի լանդշաֆտային գոտու լեռնայնությունը, հետագա դասակարգման տասքսոնոմիկ միավոր է ընդունվել լանդշաֆտների քաղաքաշինական օգտագործման ձևերը՝

Կառուցապատված լանդշաֆտներ,

Կառուցապատման ենթակա լանդշաֆտներ,

Գյուղատնտեսական նշանակության հողահանդակներ,

Անտառտնտեսության հողեր,

Անօգտագործելի հողատարածքներ,

Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտների օգտագործման ռեժիմը նախատեսում է՝

Կառուցապատման կանոնակարգում՝ բնակչության և կառուցապատման համապատասխան խտությունների կիրառումով,

Հարմարավետ կապերի ստեղծում,

Ճարտարագիտական նախատեսման միջոցառումների կիրառում (ուղղաձիգ հատակագծում, մակերևութային ջրերի հեռացում),

Տարբեր օբյեկտների և ենթակառուցվածքների սանիտարական գոտիների պահպանման պահանջների կիրառում, որն ընդգրկում է՝

- ագրոտեխնիկական միջոցառումներ,
- մարզագետիկների հողաբարելավման միջոցառումներ,
- ջրատեխնիկական միջոցառումներ:

Անտառտնտեսության հողերում նախատեսվում է՝

- անտառածածկ տարածքների բարենպաստ պայմանների ստեղծում
- գոյություն ունեցող անտառների բոնիտետի բարելավում:

2.3. Օդերևութաբանակլիմայական պայմանները

Զովունի բնակավայրի ներկա տարածքը գտնվում է Հրազդան գետի աջակողմյան սարահարթի վրա՝ Երևանի հյուսիս-արևմտյան լեռնային գոտում, իսկ Եղվարդ քաղաքից դեպի հարավ՝ 16կմ հեռավորությամբ: Բուն բնակավայրը, ներառյալ վարչական կենտրոնն ու բազմաբնակարան բնակելի տները, որ

զբաղեցնում է սարահարթի համեմատաբար հարթ տարածքը, գտնվում է ծովի մակարդակից 1250մ բարձրության նիշի վրա: Դեպի Հրազդանի կիրճ զարգացող տարածքները, ներառյալ ամառանոցային, այգեգործական գոտիները, գտնվում են 1200-1100մ, իսկ համայնքի տարածքի հարավային՝ Երևանին հարող տարածքները 1173մ նիշերում:

Ընդհանուր առմամբ տարածքի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները, սակայն խոնավության առումով ամառներից շատ չեն տարբերվում: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Դիտարկվող տարածքին ամենամոտը տեղադրված է «Եղվարդ» օդերևութաբանական կայանը: Կայանի տվյալները առավելապես բնութագրում են տեղանքի կլիմայական պայմանները և հասանելի են «Շինարարական կլիմատոլոգիա» ՀՀՇՆ II-7.01-2011:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -33°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+39^{\circ}\text{C}$: Տեղումների տարեկան միջինը 436 մմ է, օդի հարաբերական խոնավության տարեկան միջինը՝ 61%: Առավել մանրամասն կլիմայական տվյալները բերված են աղյուսակներ 2.3.1-2.3.6-ում:

Աղյուսակ 2.3.1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, Մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C											Միջին տարե կան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավել լագույն, °C	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Եղվարդ	1336	-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6	33	39

Աղյուսակ 2.3.2. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը [^]		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի	
	Ապահովվածությունը, %		Բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը	միջին ամսական	միջին ամսական, ժամը 15-ին	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	Տեղումների օրական առավելագույն քանակը	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույն ըստ ուղղությունների, հուլիսին, մ/վ
	0,95	0,99									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Եղվարդ	30	31	39	29,9	12,9	48	33	252	53	ՀսԱրլ	5,7

Աղյուսակ 2.3.3. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, %	ամենա ցուրտ ամսվա %	ամենա շոգ ամսվա, %
Եղվարդ	73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61	66	33

Աղյուսակ 2.3.4. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական, մմ օրական առավելագույն ըստ ամիսների													Ձնածածկույթ		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Եղվարդ	34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436	68	74	156
	30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53			

Աղյուսակ 2.3.5. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												20	50	100
			(Հս)	(ՀսԱրլ)	(Արլ)	(ՀվԱրլ)	(Հվ)	(ՀվԱրմ)	(Արմ)	(ՀսԱրմ)							
Եղվարդ	866	հունվ.	6	48	11	3	15	6	9	2	40	1,1	2,6	29	24	29	34
			1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7							
		ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6					
			3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1							
		հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4,8					
			4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8							
		հոկտ.	5	55	6	3	16	8	6	1	31	1,9					
			2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2							


Աղյուսակ 2.3.6. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերուօրային կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի	
	ամենացուրտ օրվա, ապահովվածությունը, %		ամենացուրտ հնգօրյակի, ապահովվածությունը, %		ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենա ցուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տողությունը, օր			միջին ամսական	միջին ամսական, ժամը 15-ին	Տեղումների քանակը նո-յեմբեր-մարտ ամիսներին, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գեղակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետր-վար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնն ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
	0,98	0,92	0,98	0,92				Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր, °C								
	0	8	10													
Եղվարդ	-23	-20	-20	-17	5,2	-33	9,0	88	161	179	73	66	184	79	ՀսԱրլ	1,8
								-3,6	0,2	0,8						


2.4 Մթնոլորտային օդը

Երևան քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: 2021թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը* (ՄԱՑ) 2.14 է (փոշի՝ 1.15, ծծմբի երկօքսիդ՝ 0.34, ազոտի երկօքսիդ՝ 0.61, գետնամերձ օզոն՝ 0.05): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու և ազոտի երկօքսիդի՝ աճման տենդենց* (աղյուսակ 2.4.1): 2021 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշներից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1 անգամ: Մնացած ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 29%-ում դիտվել են փոշու, 13%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 0.4%-ում՝ ազոտի երկօքսիդի, 1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Զովունի բնակավայրում գործող օդի որակի դիտակետ առկա չէ: Ամենամոտ դիտակետերը տեղակայված են Դավթաշեն համայնքում՝ համար 30, 31 և 32-ը, որոնց գրանցած տվյալների վկայում են, որ տարածքում 2021 թվականին ծծմբի երկօքսիդի (SO₂) միջինացված կոնցենտրացիան կազմում է 0.01 մգ/մ³ ըստ 30 և 31 դիտակետերի և 0.03 մգ/մ³ ըստ 32 դիտակետի, ազոտի երկօքսիդի (NO₂) միջինացված կոնցենտրացիան 0.02 մգ/մ³ (նկարներ 2.4.1 և 2.4.2):



Սկար 24.1. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2021/ Երևան



Նկար 2.4.2. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2021/ Երևան

**Մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիաների
 (մգ/մ³) փոփոխությունները 2017-2021թթ**

Աղյուսակ 2.4.1

Միացություն	Բնութագրիչ	Տարեթիվ					Տեղեկնց
		2017	2018	2019	2020	2021	
Փոշի	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.143	0.110	0.128	0.117	0.172	0.0064
	Փորձանմուշների քանակ	2401	1711	1729	1542	1755	
Ծծմբի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.029	0.028	0.018	0.013	0.017	-0.0040
	Փորձանմուշների քանակ	2428	1764	1757	1557	1769	
Ազոտի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.022	0.020	0.015	0.032	0.027	0.0022
	Փորձանմուշների քանակ	2403	1762	1751	1556	1768	
Գետնամերձ օդոն	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.008	0.007	0.006	0.004	0.005	-0.0008
	Փորձանմուշների քանակ	2394	1763	1738	1536	1766	

2.5 Աղմուկի մակարդակը

«Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերով (այսուհետ՝ նորմեր) սահմանված են պարտադիր պահանջներ, որոնք պետք է պահպանվեն տարբեր նշանակության շենքերի և շինությունների նախագծման, շինարարության և շահագործման, բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ընթացքում՝ աղմուկից պաշտպանության նպատակով, ինչպես նաև արտադրական, բնակելի, հասարակական շենքերում ու բնակելի կառուցապատման տարածքներում ձայնազիտական (ակուստիկ) միջավայրի նորմատիվ պարամետրերն ապահովելու համար:

Հաստատուն աղմուկ ստեղծող տեխնոլոգիական և ինժեներական սարքավորումների աղմուկի բնութագրերն են՝ ձայնային հզորության մակարդակները՝ Lw, դԲ, հաճախությունների ութ օկտավային շերտերում՝ 63-ից մինչև 8000 Հց միջին երկրաչափական հաճախություններով (ձայնային հզորության

օկտավային մակարդակները), իսկ ոչ մշտական աղմուկ ստեղծող սարքավորումներինը՝ ձայնային հզորության համարժեք մակարդակները՝ Լ_{wh}մԺ և ձայնային հզորության առավելագույն մակարդակները՝ Լ_{max}, հաճախությունների ութ օկտավային շերտերում:

Համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերի դեպի աղմուկի աղբյուրն ուղղված շենքերի համար թույլատրվում է ձայնի համարժեք մակարդակի բարձրացում 5 դԲԱ-ով երթևեկության շերտից 7.5 մ հեռավորության վրա և տրանսպորտային հոսքերի աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի ցերեկը՝ 65 դԲԱ, գիշերը՝ 55 դԲ, իսկ առավելագույն մակարդակը՝ 80 դԲԱ:

Զովունի բնակավայրում բնակչության խտությունը կազմում է 23.8 մարդ/հա, ծանր արդյունաբերական խոշոր օբյեկտներ չկան, ինչից կարելի է ենթադրել, որ ավտոտրանսպորտից առաջացող աղմուկի մակարդակը գտնվում է թույլատրելի սահմաններում:

2.6 Հողերի բնութագիրը

Զովունու հողերի տիպը Գորշ կիսաանապատային է, տեղ-տեղ Պալեոհիդրոմորֆ կապակցված հողերի արկայությամբ (Նկար 2.6.1.):


Կիսաանապատային գորշ հողեր: Տարածվում են 800-1000 մ բարձրություններում, որոնց բնորոշ են հումուսային հորիզոնի ոչ մեծ հզորություն (25-40սմ) և հումուսի ցածր պարունակություն (2%), քարքարոտություն, կմախքայնություն, կարբոնատների զգալի պարունակություն: Կարբոնատային հորիզոնից ցած հանդիպում են ցեմենտացված կարբոնատային և գիպսակիր շերտերը: Տեղ-տեղ նկատվում են աղակալումներ, որոնք ունեն թույլ կլանունակություն (20-30 մգ/էկվ), անբավարար ջրաֆիզիկական հատկություններ՝ հազեցած հողակալի հիմքերով (pH=7,5-8,5):

Պալեոհիդրոմորֆ կապակցված հողեր: Տարածվում են Երևան քաղաքին հարող տարածքներում, գտնվում են տարագույն կավերի վրա, բնորոշ են թույլ հումուսացվածությամբ (0,8-1,3 %) և թույլ կարբոնատությամբ (4-12 %),

աղակալվածությամբ, ճեղքավորվածությամբ, կավային մեխանիկական կազմով, հիմնային թույլ ռեակցիայով, գիպսացվածությամբ և միջին կլանունակությամբ, խիստ անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններով:

Համայնքում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:



Նկար 2.6.1. ՀՀ հիմնական հողատիպերի քարտեզ


2.7 Մակերևութային և ստորերկրյա ջրահոսքեր

Զովունու տարածքի մակերևութային ջրերը թափվում են Հրազդան գետը, որը իր հերթին պատկանում են Հրազդանի ջրհավաք ավազանին: Հրազդանը ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավարևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով ու թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Բնական պայմաններում Հրազդանի սնումը 62,5%-ով ստորերկրյա է, հորդացումը՝ զարնանային, վարարումները՝ ամռանն ու աշնանը: Ջրի տարեկան միջին ծախսը 22,6 մ³/վրկ է, առավելագույնը՝ 138 մ³/վրկ, նվազագույնը՝ 9 մ³/վրկ, տարեկան հոսքը 712 միլիոն մ³:


Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և այլումինով: Քաղսի գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով: Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԵԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԵԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով: Հրազդան գետի 52, 53, 54, 56, 225 դիտակետերում ջրի որակի «անբավարար» և «վատ» դասերը պայմանավորված են վանադիումով և կալիումով, որոնց պարունակությունը նշված գետում ֆոնային է:

Աղյուսակ 2.7.1


Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հրազդան	Հրազդան	գյ. Գեղամավանի մոտ (51*)	ԹՔՊ, այլումին	3-րդ	3-րդ	
		0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	Վանաղիում*	4-րդ	4-րդ	
		0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	Արսեն	3-րդ	5-րդ	
			Վանաղիում*	5-րդ		
	Հրազդան	Հրազդան	9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկի մոտ (55)	Նիտրիտ իոն, երկաթ, նատրիում, սոռոհո հոն	3-րդ	5-րդ
				Լուծված թթվածին, ԹԿՊ, ԹՔՊ, մանգան, կոբալտ, ԿՆ	4-րդ	
				Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանաղիում, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
			Գետաբերան	Գետաբերան	Գետաբերան	Գետաբերան



Նկար 2.7.1.




Նկար 2.7.2.



Նկար 2.7.3

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունակալեցադային կեղտաջրերը: 2020 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 25%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը:



Զովունու տարածքով է անցնում նաև Արզնի Շամիրամ ջրանցքը, որը ոռոգում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի շուրջ 30 հազար հա հողատարածությունները: Մայր ջրանցքը (երկարությունը՝ մոտ 92 կմ) սկիզբ է առնում Արզնիի հիդրոէլեկտրակայանը սնող ճնշման ավազանից և սկզբնամասում ունի 25 մ³/վրկ թողունակություն: Շինարարությունն ավարտվել է 1973 թվականին: 2010-ականների սկզբին կատարվել են վերանորոգման աշխատանքներ:

2.8 Բուսական և կենդանական աշխարհի նկարագրություն

Եղվարդի սարահարթի տարածքը ներկայացված է հիմնականում տափաստանային բուսականությամբ: Հացազգի և հացազգի-բազմաբուսականությամբ տափաստանները հիմնականում փետտուկային

լեռնային տափաստաններ են (*Festuca valesiaca* ձևավորումներ) բարակոտիկ կատարավորի (*Koeleria cristata*), կրակ խայտաբղետի (*Bromus variegata*), դաշտավլուկ սոխուկավորի (*Poa bulbosa*), ճիլ տափաստանայինի (*Phleum phleoides*) մասնակցությամբ: Առանձին հատվածներում նկատվում են ոչ մեծ հարոսներ, որոնցում ամբողջությամբ գերիշխում է երիզախոտը/երիզաքիստ երկարամազը: Նարդեաների խմբավորումները աչքի են ընկնում իրենց բնորոշ դեղնականաչավուն գույնով. ամառվա սկզբին դրանց ցողունը սկսում է դեղնել, իսկ հուլիսին այդ բույսերի վերգետնյա հատվածը չորանում է: Եղվարդ բնակավայրի շրջանում արձանագրված են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված միայն մի տեսակ՝ Սոխ Օլթի: Այն համարվում է վտանգված տեսակ, բուսատեսական սպառնացող վտանգը կապված է տափաստանների հերկման և գերարածեցման հետ:

Համայնքում առկա հաբիթաթները և դրանց շրջակայքը կարող են հիմնականում սահմանվել որպես տարբեր աստիճանի աղքատացմամբ տափաստանային գյուղատնտեսական տարածքներ: Շրջակայքի գյուղական հաբիթաթները ներառում են քարածածկ արոտավայրեր՝ ոչխարների և խոշոր եղջերավոր անասունների համար, նախկին դաշտեր, պտղատու ծառերով այգիներ:

Համայնքի տարածքում գրանցված են դեգրադացիայի փուլում գտնվող տափաստանային գոտու գյուղատնտեսական հաբիթաթներին բնորոշ կենդանատեսակներ

Այստեղ առկա այգիները նախկին գյուղատնտեսական տարածքներում պահպանված ծառերով միակ տարածքներն են, դրանք բնադրման վայրեր են ճնճղուկների ընտանիքին պատկանող *Miliaria calandra* և *Emberiza sp.* Տեսակների համար: Լայն բաց հաբիթաթները որսի համար նպաստավոր տարածքներ են թե այստեղ բնակվող գիշատիչ թռչունների համար, ինչպիսին *Milvus migrans* է և թե միգրացիայի արդյունքում այստեղ հասած և ձմեռակացի եկած տեսակների համար, ինչպիսին *Falco columbarius*-ն է: Ենթադրվում է, որ այստեղ կլինեն ևս մի քանի տեսակներ: Դաշտի երկայնքով աճող եղեգնուտները տափաստանային հաբիթաթներ են միգրացիայի արդյունքում այստեղ գտնվող այնպիսի թռչունների համար, ինչպիսիք *Emberiza schoeniclus*, *Motacilla alba*, և *Hirundo rustica*-ն են:

Կենդանիները կարող են բնակություն հաստատել նախկին այգիներում, որոնց տարածքներն այսօր չեն օգտագործվում:

Հրազդանի կիրճը

Հրազդան գետի հունն և ափերը իրենցից ներկայացնում են խիստ խախտված էկոհամակարգ: Գետի հոսքը կարգավորվում է փոքր ամբարտակներով և պատնեշներով, ինչը հանգեցրել է այստեղ լճացած և դանդաղ հոսող ջրերին բնորոշ բուսականության առաջացման: Այստեղ ներկայացված են Lemna, Potamogeton, Phragmites և այլ ցեղերի տեսակներ: Գետի ափերին հիմնականում աճում են ուռենիներ և բարդիներ, հանդիպում է Morus alba, հաճախ նրանք ծածկված են թփային բուսականությամբ:

Հրազդանի կիրճի թեք լանջերը իրենցից ներկայացնում են քարքարոտ բուսականության և լեռնատափաստանային բուսածածկ տարածքների համադրություն: Այն իր մեջ ընդգրկում է Հայաստանի ֆլորայի աբորիգեն հարուստ տեսակային կազմ, որը գարուն-ամառ ժամանակահատվածում կիրճի լանջերին տալիս է գունեղ տեսք: Այստեղ ներկայացված են Stipa, Papaver, Festuca, Aegilops, Tanacetum և այլ ցեղերի տեսակներ: Այստեղ կան նաև տարածքներ խիստ փոփոխված տափաստանային էկոհամակարգերով:

Կեղտաջրերի հաշվարկային ելքերի որոշման համար, որպես հիմք ընդունվել են ՇՆևԿ 2.04.02-84*-ը, Զովունի համայնքի գլխավոր հատակագծով որոշված բնակչությունը և զարգացման ուղղվածությունը:

Կեղտաջրերի ելքերի հաշվարկը հաշվարկային հեռանկարում բերված է աղյուսակային ձևով:

Աղյուսակ 6.1

Սպառողները	Զրահեռացման նորմը (մ ³ /օր)	Կոյուղու ելքը 2014թ				Կոյուղու ելքը 2029թ .			
		Քանակը	մ ³ /օր	լ/վրկ	max լ/վրկ	Քանակը	մ ³ /օր	լ/վրկ	max լ/վրկ
2	3	4	5	6	7	8	9	10	11
Բնակչությունը	200	6200	1240.0	14.35		6840	1368.0	15.83	
Արդյունաբերության	20%	-	248.0	2.87		-	273.6	3.17	

Չնախատեսված ծախսեր	10%	-	148.8	1.72		-	164.16	1.9	
ընդամենը			1636.8	18.94			1805.76	20.9	
Անվերադարձ կորուստը	10%		163.68	1.89			180.58	2.1	
Կոյուղու կոլեկտորի տրվող ջրաքանակը			1473.12	17.05	26.42		1625.18	18.8	28.2

- Կոյուղու ցանցեր ստեղծելու և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ պատշաճ վիճակը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել մեծածավալ աշխատանքներ:
- Նշված աշխատանքների համար պահանջվող ներդրումները բերված են աղյուսակի ձևով:

Աղյուսակ 6.2

N	Աշխատանքի անվանումը	Պահանջվող ներդրումը մլն.դրամով
1	2	3
1	Ցանցի կառուցում	824.6
	Ընդամենը	824.6

- Համակարգի կառուցման ժամանակ պետք է հաշվի առնվեն արտակարգ իրավիճակում կայուն ջրամատակարարման և կոյուղացման ապահովումը:
- Այս առումով նախատեսվում է.
- ՕԿԶ-ներում հակահրդեհային ծավալի պահում,
- Բաշխիչ ցանցերը պետք է լինեն գոտիավորված, օդակային և ապահովված հակահրդեհային հիդրանտներով:

6.7 Հեղեղատար կոյուղի

- Զովունի համայնքի սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու և բարեկարգման համար անհրաժեշտ էլեմենտ է հանդիսանում հեղեղատար կոյուղին:

- Հեղեղատար կոյուղու նպատակն է գյուղական համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի հեռացումը: Ներկայում Զովունի համայնքը հեղեղատար կոյուղով ապահովված է մասնակի, իսկ մյուս մասում անձրևաջրերը անկանոն ձևով առանց մաքրման հեռացվում են ըստ ռելիեֆի:
- Համայնքի ռելեֆը հնարավորություն է տալիս հեղեղատար ջրերի ամբողջ ելքը հավաքել և երկու ուղղություններով բնակավայրի հարավ-արևելյան և հարավ-արևմտյան ուղղել դեպի Երևան քաղաքի հեղեղատար կոյուղի:
- Նախագծի իրականացման համար անձրևաջրերի թողարկների տեղերը պետք է համաձայնեցվեն սանիտարական հսկողությունը և բնապահպանական հսկողությունն իրականացնող մարմինների հետ:
- Հեղեղային կոյուղին պետք է ընդգրկի գյուղական համայնքի ամբողջ տարածքը և համայնքը շրջապատող ամբողջ ջրհավաք ավազանը: Կոյուղու ընդհանուր երկարությունը կկազմի.
- ներթաղամասային ցանցեր - 8.7 կմ,
- փողոցային ցանցեր - 18.8 կմ,
- Ընդամենը - 27.5կմ,
- Հեղեղատար ցանցերը կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե և այն Φ200- 500 խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Ստորև բերված է հեղեղատար կոյուղու շինարարության համար պահանջվող ներդրումների մեծությունը 2029թ հեռանկարում:

Աղյուսակ 6.3

N	Աշխատանքի անվանումը	գումարը մլն.ՀՀ դրամով
1	2	3
1	Բակային և փողոցային ցանցի շինարարություն	467.5
	Ընդամենը	467.5

6.8 Էլեկտրամատակարարում

Համայնքի գլխավոր սնուցող ենթակայանը 4000 կվա հզորությամբ 35/6 կվ լարման Երևան քաղաքի Դավթաշեն համայնքի ենթակայանն է: Այդ ենթակայանի ՍՊԳ-ի տարածքում նախատեսված չեն բնակելի, հասարակական, ուսումնական, բուժական հաստատություններ: Բնակավայրի տարածքում գործում են 10/0.4 կվ լարման 8 (մեկտրանսֆորմատորային) ենթակայան, որոնց գումարային հզորությունը կազմում է 3200 կՎԱ:

Էլեկտրաէներգիայի տարեկան գումարային ծախսը 3255 կվտ/ժ, որից կոմունալ կենցաղային կարիքների համար՝ 2747 կվտ/ժ, արտադրական կարիքների համար՝ 508 կվտ/ժ: 10 կվ էլեկտրահաղորդման օղային գծերի երկարությունը 6.5 կմ է, մալուխային գծերի երկարությունը՝ 0.04:

Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը


Հաշվարկային էլեկտրական բեռնվածությունը և առավելագույն հզորությունը հաշվարկված է որպես հզորությունների գումար՝

ա/ կոմունալ-կենցաղային պահանջների, հասարակական, կուլտուր-կենցաղային և լուսավորության բեռնվածքների հաշվարկն ամփոփված է աղյուսակում /չափման միավոր՝ կՎտ/ժամ/:

Կոմունալ-կենցաղային կարիքների համար պահանջվող առավելագույն հզորությունների հաշվարկը կատարված է 1 բնակչի խոշորացված տարեկան ծախսով՝ 525 կՎտ/ժամ:

Աղյուսակ 6.4

Անվանումը	2014թ համար			2029թ համար		
	Կոմունալ կենցաղային	Արդյունաբերություն	Ընդամենը	Կոմունալ կենցաղային	Արդյունաբերություն	Ընդամենը
Զովունի բնակավայր	2747	508	3255	2993	598	3591
Ընդամենը	2747	508	3255	2993	598	3591



Նկար 6.2. Բարձր լարման էլեկտրահաղորդման գծեր

Նախագծային առաջարկություններ

- Մույն հատակագծով կառուցապատման ենթակա տարածքների համար անհրաժեշտ 10 և 0.4 կվ լարման ցանցի նախատեսում:
- Համակարգի արդիականացում, էլեկտրախնայողություն՝ կորուստները ցանցերում հասցնելով նորմատիվային պահանջներին:
- Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:
- Համակարգի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:

- Հին փայտյա հենասյուների փոխարինում նորերով:
- Այլընտրանքային էներգետիկայի կայացում և զարգացում:

6.9. Գազամատակարարում

Զովունի համայնքը գազաֆիկացված է 80%-ով: Համայնքի գազամատակարարումը իրականացվում է Երևանի և Զովունի համայնքի սահմանագծով անցնող բարձր ճնշման Φ 150մմ գազատարից:

Համայնքի գազամատակարարման համակարգը երկաստիճան է:

Սույն գլխավոր հատակագծով նախատեսվում է, որ հեռանկարում բնական գազով պետք է ապահովվի:

ա/ բոլոր բնակելի և հասարակական նշանակության այլ շենքերի (կրթական, մշակութային, վարչական և այլն) ջեռուցումը:

բ/ բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ ջերմության պահանջարկը,

գ/ արտադրական նշանակության օբյեկտների տնտեսական և տեխնոլոգիական կարիքների համար անհրաժեշտ ջերմության պահանջարկը:


Անհատական բնակելի տների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական բնակարանային կաթսաներով կամ գազի վառարաններով, իսկ տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման կարիքներն ապահովելու համար բնակարաններում տեղադրվում են գազասալիկներ և գազի ջրատաքացուցիչներ:

Վարչական և այլ շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կարող է իրականացվել կենտրոնացված եղանակով կցակառույց (ինչպես նաև գոյություն ունեցող) կաթսայատներից:

Այս հարցերը իրենց լուծումը կարող են ստանալ կոնկրետ այդ շենքերի ջերմամատակարարման աշխատանքային նախագծերի մշակման ժամանակ: Ընդ որում ջերմամատակարարման եղանակի ընտրության համար որոշիչ նշանակություն կարող է ունենալ այն հանգամանքը, թե այդ շենքերում ինչ հնարավորություններ կան տաքացվող տարածքից ծխագազերի հեռացման համար:

Մանդի պատրաստումը բոլոր տեսակի բնակելի շենքերում իրկանացվում է գազասալիկներով:

Դպրոցի, մտուր-մանկապարտեզի, հիվանդանոցային, հյուրանոցային և վարչական այլ շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել կենտրոնացված եղանակով նոր կառուցվող կամ գոյություն ունեցող ոչ մեծ հզորությամբ կաթսայատներից:



Նկար 6.3. Գազամատակարարում

Բնական գազի հաշվարկային ծախսը և տարեկան պահանջարկը

Հաշվարկների համար ելակետային տվյալները բերվում են ստորև:

2014թ մակարդակով.

- բնակչության թիվը՝ 6200 մարդ,

- բնակելի ֆոնդի և հասարակական շենքերի մակերեսները կազմում են՝ 180.0

հազ.մ²,

- մենատների և հասարակական շենքերի ծավալը կազմում է՝ 696.0 հազ.մ³,

Հեռանկարային 2029թ մակարդակով.

- բնակչության թիվը՝ 6840 մարդ,

- նոր կառուցվող (հիմնականում կոտեջային շենքով) բնակելի ֆոնդի և

հանգստի գոտու ընդհանուր օգտակար մակերեսը՝ 19.2հազ.մ², մոտավորապես՝

85.2 հազ.մ³ ընդհանուր ծավալով:

Զեռուցման համար ջերմության պահանջարկը.

Բնակելի շենքերի ջեռուցման համար անհրաժեշտ ջերմային էներգիայի հաշվարկային հզորությունը (Q_h) հաշվվում է հետևյալ բանաձևով.

$$Q_h = \sum X_{\varphi} \times V (t_u - t_{h_n}) \times 10^{-3} \text{ կՎտ (հազ.կկալ/ժ), որտեղ}$$

X_{φ} – շենքի ջեռուցման տեսակարար բնութագիրն է, գոյություն ունեցող անհատական տների, ինչպես նաև նոր կառուցվող բնակելի ֆոնդի համար, նկատի ունենալով էներգախնայողական միջոցառումների կիրառումը, ընդունվում է՝ 0.75 Վտ/մ³ 0C (0.65 կկալ/ժ.մ³ 0C).

V- շենքերի տվյալ տեսակի գումարային ծավալն է նրանց արտաքին չափերով, մ³

$t_u - t_{h_n}$ - համապատասխանաբար ջեռուցվող շենքի ներսի և ջեռուցման համար դրսի օդի հաշվարկային ջերմաստիճանն են, ըստ ՀՀՇՆ IV-12.02.01 $t_u = 18^{\circ}\text{C}$, իսկ $t_{h_n} = -21^{\circ}\text{C}$:

Զերմության տարեկան պահանջարկը ջեռուցման համար որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{տ} = 24 \times n \times Q_h (t_u - t_{h_n}) / (t_u - t_{h_n}) \times 10^{-3} \text{ ՄՎտժ (գկալ), որտեղ.}$$

24 – օրվա ժամերի թիվն է.

n - ջեռուցման սեզոնի տևողությունն է, 150 օր

t^հ - ջեռուցման սեզոնի ընթացքում դրսի օդի միջին ջերմաստիճան՝ -1.7°C

Հասարակական նշանակության՝ կրթական, մշակութային, առողջապահական վարչական և այլն շենքերի ջեռուցման համար ջերմության հաշվարկային հզորությունը և տարեկան ծախսն ընդունվում է բնակելի շենքերի ծախսի 20%-ի չափով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ջեռուցման համար ջերմության հաշվարկային հզորությունները և տարեկան ծախսերը շենքերի առանձին տեսակների համար ներկա (2014թ) և հեռանկարային (2029թ) մակարդակներով:

Ջեռուցման համար ջերմային էներգիայի հաշվարկային հզորությունները կկալ/ժ և տարեկան պահանջարկները գկալ.

Աղյուսակ 6.5

Շենքի տեսակները	2014 թ. համար			2029թ համար		
	Գումարային ծավալը հազ.մ ³	Ջերմության հաշվ. հզորութ	Ջերմության տարեկան ծախսը	Գումարային ծավալը հազ.մ ³	Ջերմության հաշվ. հզորութ	Ջերմության տարեկան ծախսը
1-3 հարկերի անհատական տներ	696	17644	116873	781.2	19803	131178
Նոր կառուցվող բնակելի տներ	-	-	-	85.2	2160	7776
Ընդամենը		17644	116873		19803	131178

6.10 Ջերմամատակարարում

Նախատեսվում է, որ յուրաքանչյուր բնակարանում տեղադրվում է գազային ջրատաքացուցիչ և 4 օջախատվ գազասալիկ՝ Համաձայն ՇՆՁ IV-12.101-04 այդպիսի դեպքում մեկ մարդու համար ջերմության տարեկան ծախսը տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար կազմում է՝ 2.4 գկալ/մարդ

(10 ԳԶ/մարդ): Ելնելով նշվածից բնակելի ջերմության տարեկան պահանջարկը տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար կլինի՝

2014թ համար – $6200 \times 2.4 = 14880$ գկալ

2029թ համար - $6840 \times 2.4 = 16416$ գկալ

Հասարակական շենքերում սննդի պատրաստումը նախատեսվում է իրականացնել էլեկտրական էներգիայով:

Հասարակական նշանակության այլ շենքերում տաք ջրամատակարարման համար անհրաժեշտ ջերմության ծախսը փոքր մեծություն է և տվյալ դեպքում այն գնահատվում է մոտավորապես 500 գկալ/տարի:

Արտադրական նշանակության օբյեկտների, նրանց արտադրողականությունների վերաբերյալ կանխատեսումները բացակայում են:

Ելնելով ջերմային էներգիայի տարեկան պահանջարկներից, որոշվել է բնական գազի տարեկան պահանջարկները Զովունի համայնքի համար ընդունելով գազի ստորին ջերմատվությունը 8000 կկալ/մ³ և գազասպառիչ սարքերի ՕԳԳ-0.85:

Հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակում.


Բնական գազի տարեկան պահանջարկները Զովունի բնակավայրի համար.

Աղյուսակ 6.6

Ջերմության էներգիայի սպառիչներ	2014թ համար		2029թ համար	
	Ջերմության պահանջարկը գկալ	Բնական գազի պահանջարկը հազ. նմ ³	Ջերմության պահանջարկը գկալ	Բնական գազի պահանջարկը հազ. նմ ³
Ջեռուցում	116873	12593	31178	14139
Բնակչության տաք ջրամատ. և սննդի պատրաստում	14880	1604	16416	1770
Հասարակական նշանակության շենքեր	500	74	500	74
Ընդամենը	132253	14271	148094	15983

6.11. Ճանապարհային հաղորդակցուղիների ցանց և կարգավորող գծեր

Ճանապարհատրանսպորտային մասով նախատեսվում է կարմիր գծերի հստակեցում և ճշգրտում, վերակառուցողական բնույթ կրող ճանապարհների լայնացում: Քանաքեռավանի հանգույցում նախատեսվում է տարբեր մակարդակների հանգույց, որը չի խոչընդոտում Հ-4 մայրուղու անընդհատ շարժմանը:



Նկար 6.4. Ճանապարհատրանսպորտային ցանց.

7. ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՏԱՐԵՐԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՑ

Համաձայն 2.1 ենթաբաժնում նշված աշխատանքի, տվյալ հատվածների համար տարերային (բնածին) վտանգավոր երևույթների առաջացումը, զարգացումը և համապատասխան սպառնալիքները պայմանավորված են տվյալ տարածքի ռելիեֆի բնույթով, երկրաբանալիթոլոգիական առանձնահատկություններով, հիդրոերկրաբանական պայմաններով, ինչպես նաև անտրոպոգեն (տեխնածին) տարբեր հանգամանքներով՝ անկանոն հողհանումներ, ռելիեֆի, հատկապես թեք լանջերի կտրվածքներ, գրունտների արհեստական ջրհագեցումներ, անհաշվենկատ մակերեսային ջրոդոդումներ:

Ինժեներական պաշտպանական միջոցառումները նպատակաուղղված են տվյալ տարածքի առանձին տեղամասերի, ինչպես նաև տարբեր կառուցվածքների վրա ազդող տարերային վտանգավոր երևույթների կանխարգելմանը, վերացմանը կամ դրանց նվազեցմանը, պաշտպանական առավել արդյունավետ և շահավետ միջոցառումների կիրառմամբ:

Անհրաժեշտ է նաև տվյալ տարածքի և օբյեկտների տեխնիկական վիճակի ռեժիմային հսկողություն (մոնիտորինգ)՝ ինժեներական միջոցառումների թե իրականացման, և թե դրանց շահագործման փուլերում:

Վտանգավոր երևույթներից տարածքին բնորոշ են՝

- մակերեսային ջրոդոդումներ, հատկապես սեզոնային առատ տեղումների փուլում,
- գերնստեցումային, ենթաոդոդումային հատկանիշներ դրսևորող գրունտների (սպիտակահողեր) առկայությամբ պայմանավորված քաղաքաշինական վտանգավոր երևույթները:

7.1. Մակերեսային հակաջրոդոդումային միջոցառումներ

Նախագծվող տարածքի տարբեր տեղամասերում մակերեսային ջրահոսքերը էյուվիալ-դեյուվիալ ծագման գրունտների վրա առաջացնում են մակերեսային, երբեմն խորքային էրոզիոն երևույթներ:

Ջրողողման ենթակա տեղամասերում պաշտպանական միջոցառումները իրականացվում են կախված ջրողողման բնույթից՝ մշտական, սեզոնային, էպիզոդիկ, ինչպես նաև հասցվող վնասի (ռիսկի) մեծությունից:

- Ջրաորսող, ջրապահ և ջրաուղորդող կառուցվածքների իրականացում, մակերեսային ջրահոսքերի կարգավորման, դրանց արգելակման, հավաքման կամ ուղղորդված տեղափոխման նպատակով,
- Անհրաժեշտ է իրականացնել մշտական հսկողություն այդ տարածքների նկատմամբ հողօգտագործման և ագրոտեխնիկական գործընթացների օրինականության խստագույն պահպանման նպատակով:

7.2 Հականստվածքային միջոցառումներ

Գրունտների նստեցման հիմնական պատճառը կայանում է նրանում, որ ջրի ներգործության տակ քայքայվում են գրունտի կառուցվածքային կապերը, առաջանում է հոսունություն և կտրուկ խտացում սեփական կամ արտաքին ծանրության ճնշման տակ: Հիմնականում այդ խտացումը ավարտվում է մի քանի բույսերում և այդ պատճառով գրունտի սեղմման, նստեցման պրոցեսն ունի «անկման» բնույթ:

Գերնստման հատկանիշներով գրունտները ջրհագեցումից (խոնավացումից) պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական հրապարակները հատակագծելիս բացառել տեղումնային և ձնհալքային ջրերի մուտքը ,
- նախատեսել և իրականացնել ջրամեկուսիչ ծածկոցներ ինչպես շենքերի շրջակայքում, այնպես էլ դրանց ներսում,
- կառուցվածքների հիմնատակերը տեղադրել ավելի խորը, ոչ նստվածքային գրունտների վրա,

- հուսալիորեն մեկուսացնել ջրատար խողովակները,
- կիրառվում է նաև նստվածքային գրունտների տափարակում կամ դրանց մասնակի փոխարինում այլ, ավելի կայուն, գրունտներով:
- համայնքի կոմունալ ծառայությունները պարտավոր են վերահսկել կառուցապատված տարածքները և անսարք ջրատար խողովակներով արտահոսքեր հայտնաբերելու դեպքում շտապ միջոցառումներ ձեռնարկել:

7.3 Խախտված հողերի վերականգնում

Տարածքի առանձին տեղամասերում ռելիեֆը փոփոխված է՝ հիմնականում շինարարական գործընթացներով: Արդյունքում խախտվել են այդ միջավայրերի բնապահպանական պայմանները, մասնավորապես այդ տեղամասերի բուսաբնահողային ծածկոցները:

Տեխնածին փոփոխված ռելիեֆով այդ տեղամասերում անհրաժեշտ է իրականացնել ռեկուլտիվացիոն համալիր (բազմակողմանի) աշխատանքներ՝ ինժեներա-շինարարական, ագլոմերատիվ, ինչպես նաև կանաչապատմանն ուղղված խախտված հողերի վերականգնմանը:

7.4. Հակասելավային, հակադեֆլյուկցիոն, հակաջրհեղեղային կառուցվածքներ և միջոցառումներ

Սելավներից, ջրհեղեղներից տարածքների, շենքերի և շինությունների ինժեներական պաշտպանության համար կիրառվում են հետևյալ կառուցվածքները և միջոցառումները.

- սելավաուղղիչ կառուցվածքներ՝ սելավային հոսքը դեպի սելավաթող կառուցվածքներ ուղղելու համար, ուղղիչ և պատող դամբեր, կարճապատնեշներ,
- սելավականխիչ կառուցվածքներ՝ սելավ առաջացնող հորդացումների կանխման համար,
- գոյություն ունեցող հակասելավային միջոցառումների և կառուցվածքների վերականգնում և նորոգում:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Զովունի բնակավայրի զարգացման միտումները բխում են համայնքների համաչափ զարգացման հիմնադրույթներից և ներկայացված են համայնքում առկա հիմնախնդիրներում:

Գլխավոր հատակագծով նախատեսված նախագծային որոշումները ուղղված են բնակչության ապրելակերպի սանիտարա-հիգիենիկ պայմանների բարելավմանը, շրջակա բնական միջավայրի և բնական կամ մարդածին էկոհամակարգերի պահպանմանը և վերականգնմանը, տարածքի՝ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից պաշտպանմանը: Հատակագծային որոշումները հաշվի են առնում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության և այլ գերատեսչությունների առաջարկները:

8.1 Մթնոլորտային օդ

Հեռանկարում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում գյուղմթերքների արտադրության ձեռնարկությունները, ասֆալտի գործարանը, ավտոտրանսպորտը, ջեռուցման համակարգը: Ասֆալտի գործարանի անվտանգության գոտում չկան բնակելի, խառը, բուժական, մանկական օբյեկտներ, շրջապատված է գյուղ. հողերով և արտադրական գոտիներով:

Ներկա դրությամբ, օդային ավազանի վիճակով տարածքը գնահատվում է բարենպաստ, անտրոպոգեն ազդեցությամբ գերիշխում են հիմնականում թույլ ազդեցության գոտիները, հիգիենիկ վիճակով՝ օդային ավազանի աղտոտվածությունը որևէ վտանգ չի հարուցում:

Զովունի գյուղում հեռանկարում նախատեսվում է զարգացնել այգեգործությունը, անասնաբուծությունը, այսինքն՝ արտադրություններ, որոնց գործունեության հետևանքով մթնոլորտ վնասակար արտանետումները գրեթե բացակայում են:

Հեռանկարում նախատեսված է ջեռուցման համակարգի ներդրում, որի հետևանքով հասարակական շինությունները՝ դպրոցները, պոլիկլինիկան և բնակելի տները կջեռուցվեն բնական գազով:

Ջեռուցման համակարգերի վնասակար արտանետումների բերված է աղյուսակ 8.1.1-ում:

Աղյուսակ 8.1.1

դր ը/հ	Անվանումը	Արտանետումների տարեկան քանակը տ/տարի	Վտանգավորության դասը
1	2	3	4
1	Ածխածնի օքսիդ	2.7	4
2	Ազոտի օքսիդներ	1.1	2
3	Փոշի անօրգանական	1.5	3
	Ընդամենը	5.5	

Բնակչության աճին համապատասխան ավելանալու է նաև ավտոտրանսպորտը քանակը, որի արտանետումների հաշվարկային քանակը բերված են 8.1.2.-8.1.3. աղյուսակում:

Աղյուսակ 8.1.2

Անվանումը	Աղտոտող նյութերը, տ/տարի			
	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդ	Ածխաջրածիններ	Ընդամենը
1.Բեռնատար	155.65	16.62	46.37	218.64
2.Ավտոբուսներ	33.3	1.48	6.2	40.98
3.Մարդատար	196.17	11.5	19.46	227.13
Ընդամենը	385.12	29.6	72.03	486.75

Աղյուսակ 8.1.3

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ դրամ/տարի
1.Ջեռուցման համակարգեր, անհատական կաթսայատներ	$\frac{3.8}{0.77}$	3.82
2 Ավտոտրանսպորտ	$\frac{486.75}{98.93}$	1536.6
3 Արդյունաբերություն	$\frac{1.5}{0.3}$	12.3
Ընդամենը	$\frac{492.05}{100}$	1552.72

Զեռուցման համակարգերից մթնոլորտ են արտանետվում տարեկան 3,8տ վնասակար նյութեր: Դեպի մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 98%-ը:

Ավտոտրանսպորտի արտանետումներից տնտեսությանը հասցված վնասը գտնվում է 1-ին տեղում՝ տարեկան 1,53 մլն դրամ:

Ընդհանուր տնտեսական վնասը բոլոր արտանետումներից կազմում է տարեկան 1,55 մլն դրամ:

Հեռանկարում համայնքի բազմաբնակարանային շենքերի ջեռուցման համար կնախատեսվեն նոր , ժամանակակից կաթսաների տեղադրում:

Հեռանկարում ջերմային աղբյուրներից մթնոլորտ արտանետումները կաճեն, սակայն, ընդհանուր առմամբ, չեն գերազանցի ՍԹԱ նորմատիվները:

Բնակավայրում մասնավոր տները ջեռուցվում են անհատապես:

Արտանետումների նվազեցման հիմնական ուղղությունը ջերմամատակարարման համակարգերի էներգաարդյունավետության բարձրացումն է:

Համայնքի օդի փոշով աղտոտվածության մակարդակի նվազեցման միջոցառումները շինարարական աշխատանքներ իրակացնելիս թաց փոշեզերծման մեթոդների կիրառումն է, փողոցների կանոնավոր թաց սանիտարական մաքրումը:

Համայնքի մթնոլորտային օդի պահպանության հիմնական ուղղությունը՝ ավտոտրանսպորտից, արդյունաբերական օբյեկտներից արտանետումների նվազեցումն է, որը ապահովվելու է վերոհիշյալ միջոցառումների հաշվին:

Համայնքի արդյունաբերական հեռանկարային զարգացման անորոշության պատճառով դժվար է կանխատեսել արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների ծավալները: Համայնքի տարածքում գործող արդյունաբերական ձեռնարկությունների համար նախատեսված են էկոլոգիական սահմանափակումներ, որոնք պետք է պահպանվեն, անկախ արտադրությունների զարգացման ուղղությունից և տեմպերից:

- Շինարարական արդյունաբերական ձեռնարկություններում ուժեղացնել հսկողությունը փոշու կազմակերպված և անկազմակերպ արտանետումների վրա:
- Նոր արդյունաբերական տարածքների կենտրոնացումը գոյություն ունեցող արդյունաբերական շրջանների տարածքներում, ինչը կնպաստի նաև վնասակար թափոնների կենտրոնացված կառավարմանը և չեզոքացմանը:
- Արդյունաբերական շրջանի տարածքներում թույլատրել IV, V կարգի ձեռնարկությունների շահագործում: Ցածր կարգի ձեռնարկությունների դեպքում կատարել սանիտարա-պաշտպանիչ գոտու ճշգրտում:

Համայնքի ճանապարհային ծածկի բարելավում, նոր մայրուղիների երկարացումը տեսակային կայուն կազմով պաշտպանիչ կանաչ շերտերի ստեղծում: Ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում և փողոցների թողունակության բարձրացում:

Հեռանկարում հասարակական ավտոտրանսպորտում էլեկտրաֆիկացված տրանսպորտի մասնաբաժնի ավելացում, ինչպես նաև ավտոմոբիլային պարկի աստիճանաբար նորացում: Ավտոմոբիլների զինումը արտանետվող գազերի չեզոքացուցիչներով:

Մթնոլորտային օդի պահպանության կազմակերպչական և վարչական բնույթի միջոցառումների թվին պետք է դասել համայնքի օդի աղտոտման աղբյուրների լրիվ հաշվառումը, նորմատիվների պահպանման հսկողության ուժեղացումը, մոնիտորինգի ցանցի ընդլայնումը:

Նշված միջոցառումները համահունչ են ՀՀ Կառավարության «Տրանսպորտային միջոցների վնասակար նյութերի արտանետման նվազեցման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 17.09.2006թ. N 1033-Ն որոշմանը:

8.2 Թափոններ

Զովունի բնակավայրը աղբավայր չունի, այդ պատճառով բնակավայրի աղբը ըստ պայմանագրի հիմնականում տեղափոխվում է Եղվարդ քաղաքային համայնքի

աղբավայր: Պայմանագիրը կնքված է Զովունի գյուղապետարանի և Եղվարդի քաղաքապետարանի «Բարեկարգում և բնակֆոնդ» գրասենյակի միջև անորոշ ժամանակով: Զովունու համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբարկղներ:

Համայնքում առաջացող կենցաղային աղբի հաշվարկային քանակները կազմում են 350.0 տ/տարի:

Գյուղացիական տնտեսություններում անասնապահական աղբը և բերքի մնացորդները օգտագործվում են դաշտերի պարարտացման նպատակով, իսկ ձմեռային շրջանում նաև որպես վառելիք:

Հայաստանի Հանրապետությունը ընդունել է թափոնների կառավարման ազգային նոր ռազմավարություն, որը հիմք կծառայի կոշտ թափոնների կառավարման համակարգի համար՝ ամբողջ երկրում: Ազգային շրջանակային ծրագիրը հաստատում է, որ այս նախագիծը համահունչ է ռազմավարության դրույթների պահանջներին:

Թափոնների կառավարման ազգային ռազմավարության մշակման ընթացքում հստակեցվել է, որ տեղական մակարդակով աղբահավաքումը, կայաններ տեղափոխումը և ԵՄ նախագծային և բնապահպանական ստանդարտներին և տեղանքի աշխարհագրական առանձնահատկություններին համապատասխան ռեգիոնալ սանիտարական աղբավայրերի առկայությունը կլինի լավագույն տարբերակը:

8.3 Հողային ռեսուրսների պահպանություն

Հայաստանում, այդ թվում նաև Զովունի բնակավայրում վերջին 15 տարիների ընթացքում կտրկուկ նվազել է ծանր մետաղների ներհոսքը շրջակա միջավայր և նրանց հետագա կուտակումը համայնքի հողածածկույթի բաց հատվածներում: Այդ նվազումը հինականում պայմանավորված է ավտոտրանսպորտում ոչ էթիլացված բենզինի և սեղմված բնական գազի օգտագործմամբ, մագուրի օգտագործման դադարեցմամբ:

Հեռանկարում համայնքում չի սպասվում ծանր մետաղների նոր աղբյուրների գոյությունը: Հողերի ինքնամաքման ունակությունը և առավել աղտոտված հատվածների առողջացման իրականացումը (ագրոտեխնիկական միջոցառումներ, կանաչապատում և այլն) կհանգեցնի համայնքի փոքր հատվածում հողերի աղտոտվածության նվազման: Տարածքը կդիտարկվի աղտոտվածության թույլ գոտի:

Հողային ծածկույթի պահպանման համար առանձնակի դեր կարող է ունենալ հետագա կանաչապատումը:

Բարձր աղտոտվածությամբ տարածքների վիճակի բարելավման համար պետք է իրականացվի առաջին հերթին սանացիա: Այդ նպատակով անհրաժեշտ է պահպանել արդյունաբերական ձեռնարկությունների հաստատված տեխնոլոգիական և բնապահպանական պահանջները,

ընդլայնել կանաչ տնկարկների մակերեսը,

իրականացնել փողոցների կանոնավոր սանիտարական մաքրում,

աղտոտված գյուղատնտեսական նշանակության հողերը օգտագործել կանաչապատման նպատակով

առաջացող հողի բերրի շերտի պահպանում և նպատակային օգտագործում:

8.4 Աղմուկի մակարդակը

Հեռանկարում Զովունի համայնքի աղմկային ֆոնը դարձյալ հիմնականում կձևավորվի քաղաքաշինական գործունեության (բնակարանաշինություն, ենթակառուցվածքներ, ճանապարհներ, շենք-շինություններ և այլն) և ավելացող ավտոտրանսպորտի հաշվին:

Փողոցա-ճանապարհային ցանցի զարգացման ուրվագծի իրականացումից բացի տրանսպորտային աղմուկի նվազեցմանը կնպաստեն հետևյալ միջոցառումները՝

- համայնքի ճանապարհային ծածկի բարելավում,
- նոր մայրուղիների երկարությամբ կանաչ պաշտպանչ շերտերի ստեղծում:

- ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործում,
- փողոցների թողունակության բարձրացում;
- տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկողության ուժեղացում:

Աղմկային անհարամարվետությունը նվազագույնի հասցնելուն մեծապես կնպաստի աղմուկապաշտպան պատուհանների և աղմուկամեկուսիչ ապակեպատման լայն կիրառությունը:

Քաղաքաշինական աշխատանքների ժամանակ շինարարական աշխատանքները իրականացնել համաձայն ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերի համաձայն:

Աղմուկից պաշտպանվելու նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա համայնքի հիմնական մայրուղիներում աղմուկի մակարդակը նվազեցնել և բնակելի կառուցապատման մեծ մասում ապահովել աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակ:

8.5 Կանաչապատման համակարգը

Զովունի բնակավայրի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որը իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները՝

- ✓ բնակավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում,
- ✓ վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում հատուկ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը, խնամքը և պահպանությունը,
- ✓ տնկարանային և ջերմատնային տնտեսությունների ստեղծում,
- ✓ անխափան ոռոգում երաշխավորող ոռոգման ցանցի կառուցում,
- ✓ ժամանակակից տեխնոլոգիաների և գիտության նվաճումների ներդրում, տնկանյութի տեսակների հիմնավորված ընտրություն,

- ✓ ընդհանուր օգտագործման կանաչապատմանն են վերագրվում՝ համայնքային զբոսայգիներն ու պուրակները, որոնք նախատեսված են համայնքի բնակչության կարճատև հանգստի կազմակերպման համար:
- ✓ նոր կանաչապատ տարածքների ստեղծում՝ պողատու ծառատեսակների օգտագործմամբ:

Զովունի բնակավայրի հարավ-արևմտյան հատվածում նախատեսված են մոտ 90.հա նոր միջին հարկայնության և բազմահարկ բնակելի կառուցապատման գոտիներ: Համաձայն նշված գործառնական գոտիներում կառուցապատման չափորոշիչների՝ տվյալ տարածքի կանաչապատման մակերեսը կազմելու է նվազագույնը 50հա:

Կանաչ ծածկույթ

Տարածքների կանաչապատման համար պետք է օգտագործել ստորև բերվող ծառերի, թփերի և փաթաթվողների (լիանաներ) տեսակները.

Ասեղնատերևավոր ծառեր

1. Գիհի բազմապտուղ - Juniperus polycarpus C. Koch
2. Գիհի վիրգինյան - Juniperus virginiana L
3. Գիհի սրաթեփուկ - Juniperus foetidissima Willd
4. Գիհի սովորական - Juniperus communis L.
5. Եղևնի կեռիկավոր - Picea pungens Engl.
6. Եղևնի կեռիկավոր արծաթափայլ - Picea pungens V. glauca Belssn.
7. Կենսածառ արևելյան - Biota orientalis Endl.
8. Սոճի դրիմյան - Pinus pallasiana Lamb.
9. Սոճի Սոսնովսկու - Pinus sosnovskyi Nakai
10. Սոճի Բանկսի - Pinus banksiana Lamb
11. Սոճի դեղին - Pinus ponderosa Dougl.

Ասեղնատերևավոր թփեր

1. Գիհի կազակական - Juniperus sabina L.
2. Գիհի ցածրած - Juniperus depressa Stev.
3. Թույա արևմտյան - Thuja occidentalis L.

Հայնատերևավոր ծառեր

1. Արնսի սովորական - *Sorbus aucuparia* L
2. Բալենի սովորական - *Cerasus vulgaris* Mill
3. Բարդի անտառային - *Populus tremula* L.
4. Բարդի Բոլլեի - *Populus bolleana* Lauche
5. Բարդի (Սիմոնի) չինական - *Populus simonii* Carr.
6. Բոխի արևելյան - *Carpinus orientalis* Mill.
7. Ընկուզենի սովորական* - *Juglans regia* L.
8. Թեղի էլիպսատերև* - *Ulmus elliptica* C. Koch.
9. Թեղի տերևաշատ* - *Ulmus foliaceae* Gilib.
10. Թեղի փետրաճյուղավոր* - *Ulmus pinnato – ramosa* Dieck
11. Թթենի սպիտակ - *Morus alba* L.
12. Թթենի սպիտակ, լացող* - *Morus alba f. pendula* Dipp.
13. Թխկի դաշտային* - *Acer campestre* L.
14. Թխկի սրատերև* - *Acer platanoides*
15. Կատալպա սովորական* - *Catalpa bignonioides* Walt.
16. Կատալպա օվալատերև* - *Catalpa ovata* G. Don
17. Խնձորենի արևելյան - *Malus aorientalis* Ugl.
18. Խնձորենի հասապտղային - *Malus floribunda* Sieb.
19. Ծիրանենի սովորական - *Armeniaca vulgaris* Lam.
20. Կաղնի արևելյան - *Quercus macranthera* Mey.
21. Կաղնի երկարակոթուն* - *Quercus longipes* Stev.
22. Կաղնի ամառային - *Quercus robur* L.
23. Կաղնի կարմիր* - *Quercus rubra* L.
24. Կաղնի շագանակատերև* - *Quercus castaneifolia* C. A. Mey.
25. Սոսի արևելյան* - *Platanus orientalis* L.
26. Սոսի թխկիատերև* - *Platanus acerifolia* Willd.
27. Սերկկիլենի սովորական - *Cydonia oblonga* Mill.
28. Տանձենի կովկասյան - *Pyrus caucasica* Fed.

- 29.Տանձենի ուռատերև - *Pyrus salicifolia* Pall.
- 30.Տխլենի սովորական - *Corylus avellana* L.
- 31.Ուռենի բարձր - *Salix excelsa* Gmel
- 32.Ուռենի սպիտակ - *Salix alba* L.
- 33.Ուռենի սպիտակ, լացող* - *Salix alba* v. *pendula* hort.
- 34.Ուռենի զամբյուղի - *Salix viminalis* L.
- 35.Կեռասենի - *Cerasus aviun* Moench.
- 36.Հացենի սովորական* - *Fraxinus excelsior* L.
- 37.Հացենի սրապտուղ* - *Fraxinus oxycarpa*
- 38.Հացենի պենսիլվանյան* - *Fraxinus pennsylvanica* March.
- 39.Հացենի նշտարաձև* - *Fraxinus lanceolata* Borkh.
- 40.Հացենի ամերիկյան* - *Fraxinus americana* L.
- 41.Նշենի սովորական - *Amygdalus communis* L.
- 42.Նշենի ֆենցլի - *Amygdalus fenzliana* Lipsky.
- 43.Նոնենի - *Punica granatum* L.
- 44.Շլորենի - *Prunus divaricata* Ldb.
- 45.Ռոբինիա կեղծակացիա - *Robinia pseudoacacia* L.
- 46.Փռչնի մերկ - *Celtis glabrata* Stev.
- 47.Զիչխան դժնիկանման - *Hippophae rhamnoides* L.

Լայնատերևավոր թփեր

- 1.Ամորֆա թփային - *Amorpha fruticosa* L.
- 2.Ասպիրակ արևքուրիկատերև - *Spiraea hypericifolia* L.
- 3.Ասպիրակ վանհուտտի - *Spiraea vanhouttei* Zbl.
- 4.Ասպիրակ ճապոնական - *Spiraea japonica* L.
- 5.Արոսի երկակի - *Sorbus dualis* Zinserl.
- 6.Բոնչի սովորական - *Viburnum opulus*
- 7.Գերիմաստի - *Viburnum lantana* L.
- 8.Դժնիկ լուծողական - *Rhamnus cathartica* L.
- 9.Դրախտաձառ - *Cotinus coggygria* Scop.

10. Եղրևանի սովորական - *Syringa vulgaris*
 11. Զկեռենի սովորական - *Mespilus germanica* L.
 12. Թիւենի սովորական - *Padus arcemosa* Gilib.
 13. Իլենի եվրոպական - *Euonymus europaea* L.
 14. Կելրեյտերիա հուրանավոր - *Kocleuteria paniculata* Haxm.
 15. Կիպրոս սովորական - *Ligustrum vulgare* L.
 16. Ծորենի արևելյան - *Berberis vulgaris* L.
 17. Խենոմելեա ճապոնական - *Chaenomeles japonica* (Thunb.) Lindl.
 18. Ֆորսիցիա օվալատերև - *Forsythra ovata* Nakai
 19. Ֆորսիցիա միջանկյալ - *Forsythra intermedia* Zab.
 20. Հաղարջենի Բիբերշտեյնի - *Ribes bibersteinii* Berl.
 21. Ճապկի արնակարմիր - *Cornus sanguinea* L.
 22. Ճապկի հարավային - *Cornus australis* C. A. Mey.
 23. Սզնի խոշորափուշ - *Crataegus macrocantha* Lodd.
 24. Սզնի արևելյան - *Crataegus orientalis* Pall.
 25. Տոսախ մշտադալար - *Buxus sempervirens* L.
 26. Ցախակեռաս կովկասյան - *Lonicera caucasica* Pall.
 27. Ցախակեռաս թաթարական - *Lonicera tatarica* L.
 28. Ցախակեռաս Մաակի - *Lonicera maakii* Maxim
 29. Բշտիկատերև բոնչիատերև - *Physocarpus opulifolia* L.
 30. Մասրենի սովորական - *Rosa canina* L.
 31. Վարդ առատափուշ - *Rosa spinosissima* L.
 32. Վարդ վահանակիր - *Rosa corymbifera* Borkh.
 33. Զմենի փայլուն - *Cotoneaster lucida* L.
 34. Զմենի հորիզոնական - *Cotoneaster horirontalis* Dcne.
- Փաթաթվողներ (լիանաներ)
1. Խաղող ամուրյան ** - *Vitis amurensis* Rupr.
 2. Խաղող կուլտուրական** - *Vitis vinifera* L.
 3. Վիստերիա չինական** - *Wisteria sinensis* Sweet.

4. Կուսախաղող հնգատերև** - *Parthenocissus quinquefolia* (L.)

5. Մամրիչ արևելյան** - *Clematis orientalis* L.

6. Վարդ մանրածաղիկ** - *Rosa micrentha* Smith.

*ԱՆՏԱՌՊՈՒՐԱԿՆԵՐԻ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՆՏԱՌ ԿԱԶՄՈՂ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԸ

** ՈՒՂՂԱԶԻԳ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

(Ընդամենը 102 տեսակ)

8.6. Զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները

Մ1:5000, 1:2000: Քարտեզում նշվում են թանգարանները, թատրոնները, հայտնի ռեստորանները և սրճարանները, զբոսայգիները և այլ տեսարժան վայրերը, տրանսպորտային կանգառները և այլ օգտակար տեղեկատվություն:

Բնության և մշակութային հուշարձանների պահպանությունը անբաժանելի են միմյանցից: Իսկ բնության հատուկ տարածքների պահպանությունը բնապահպանական քաղաքականության հատուկ բաղադրիչ է, որը պահանջում է հետևողական, շարունակական և գործնական քայլեր՝ ուղղված այդ տարածքների ոչ միայն պահպանության բարելավմանն՝ այլ նաև հասարակության կողմից ճանաչմանը:

Հայաստանի տնտեսության զարգացման առաջնահերթություն ճանաչված տուրիզմը ենթադրում է ոչ միայն մշակութային տուրիզմ՝ հենված պատմամշակութային հուշարձանների վրա, այլև հավասարապես կարող է վերաբերել նաև բնական պաշարների ու բնության հուշարձանների վրա հենվող էկոտուրիզմին, ինչպես նաև գիտաճանաչողական տուրիզմին:

Զովունի բնակավայրի զբոսաշրջային ռեսուրսներն են.

- Պատմության և մշակութային հուշարձանները,
- Գյուղի պատմության թանգարանը,

- Զովունի և Քանաքեռավան բնակավայրերի վարչական սահմանագծով անցնող և Հրազդան գետ թափվող Եղվարդ (Եղվարդաջուր, «Մարդասպանի») գետի կիրճը,
- Հրազդան գետի կիրճը:

Զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղություններ կարող են հանդիսանալ.

ա. Մշակութային տուրիզմը.

Զբոսաշրջության ձև, որը վերաբերում է այն զբոսաշրջիկներին, որոնք հետաքրքրվում են այլ երկրների կամ շրջանների մշակույթով, տեղացի մարդկանց կենսակերպով, պատմությամբ, կրոնով, ճարտարապետությամբ, արվեստով և նրանց կյանքը կազմող այլ բնագավառներով:

բ. Ագրոտուրիզմը.

Հանգիստ գյուղական վայրերում: Տուրիզմի այս ձևը զբոսաշրջիկներին հնարավորություն է տալիս վայելելու էկոլոգիապես մաքուր սննդամթերք, ծանոթանալու գյուղական կյանքին, գյուղմթերքների մշակման ու արտադրության գործընթացին, տուրիստները կարող են մասնակցել կաթնամթերքների արտադրությանը գյուղական պայմաններում, վայելելու իրենց հանգիստն մաքուր օդի պայմաններում և այս ամենը համեմատաբար մատչելի գներով: Այս ամենով, և ոչ միայն, պայմանավորված ագրոտուրիզմը մեծ հետաքրքրություն է առաջացնում տուրիստների մոտ, ինչն էլ անմիջականորեն ազդում է գյուղատնտեսության զարգացմանը, գյուղմթերքների շուկայի ընդլայնմանը, ինչն էլ բերում է գյուղաբնակների կյանքի բարելավմանը և կրճատում է գործազրկության մակարդակը: Վերջինս էլ երկրի տնտեսության վրա տուրիզմի ուղղակի կամ անուղղակի ազդեցության վառ օրինակ է:

Ագրոտուրիզմը ենթադրում է այցելուների ժամանակավոր բնակություն գյուղական վայրերում՝ ակտիվ հանգստի նպատակով: Սա հիանալի հանգստի ձև է այն մարդկանց համար, որոնք մշտապես բնակվում են մեծ քաղաքներում: Այցելուները նման հանգստի պայմաններում ակնկալում են վայելել բնությունը և ծանոթանալ գյուղական տարածքներին, կյանքին, ապրելակերպին, ավանդույթներին ու ծեսերին:

Հանգստի այս ձևն այցելուներին, զբոսաշրջիկներին, հատկապես՝ քաղաքաբնակներին, հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերելու տնտեսության վարման մասին, ծանոթանալու գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, ճաշակելու բնական, թարմ և առողջարար սննդամթերք, ինչպես և օգտվելու ոչ սովորական ժամանցի հնարավորությունից:

Ագրոտուրիզմը հնարավորություններ է ստեղծու շեշտադրելու գյուղատնտեսական բիզնեսի առանձնահատուկ ճյուղերը՝ գինեգործարաններ, պանրի և կաթի արտադրություն, պտղատու այգիներ, գյուղաշխարհի գեղեցկություն, որակյալ մթերքներ և բնական միջավայր:

Ագրոտուրիզմը հիմնականում ընտանեկան տուրիզմ է, որը հնարավորություն է ընձեռում հատկապես երեխաների բարոյահոգեբանական և աշխատանքային դաստիարակության համար: Գյուղական տուրիզմը ցանկության դեպքում գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու և գյուղական կենցաղին հաղորդակցվելու լավագույն հնարավորություններ է ստեղծում:

Ագրոտուրիզմի կազմակերպումը մեծածավալ ներդրումներ չի պահանջում: Այստեղ որպես հիմնական ներդրող հանդես է գալիս գյուղական բնակչության համեմատաբար ունևոր խավը: Ուստի գյուղական զբոսաշրջության զարգացումն ինքնին կարևոր ազդակ է դառնում նաև գյուղատնտեսության զարգացման համար:

Ագրոտուրիզմի զարգացումը նպաստում է նաև գյուղական կյանքի աշխուժացմանը, գյուղում սոցիալական ենթակառուցվածքների և մշակույթի զարգացմանը:

գ. Էկոտուրիզմը.

Բնության, նրա բաղադրիչների և պատմամշակութային հուշարձանների ճանաչողության նպատակով կազմակերպվող զբոսաշրջություն: Էկոզբոսաշրջության խնդիրներն են բնական և մշակութային ժառանգության պահպանության օժանդակումը, ազգաբնակչության էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացումը: Էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության առավել արագ զարգացող ճյուղերից է, չի նախատեսում հարմարավետ հյուրանոցներ և բարձրակարգ սպասարկման ծառայություններ իրականացվում է ավտոմեքենայով,

հետիոտն, ձիով, վրանային և այլ միջոցներով: Ըստ բնույթի՝ էկոզոոսաշրջությունը լինում է բնապահպանական, գիտաճանաչողական, մշակութային և այլն: Զովունին հարուստ է բնապատկերներով և պատմամշակութային հուշարձաններով, ռեկրեացիոն պաշարներով, որոնք էկոզոոսաշրջության զարգացման կարևոր նախապայմաններ են:

Էկոտուրիզմ՝ բնության և մշակութային տեսարժան վայրերի ուսումնասիրության և ըմբռնելու նպատակով շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվությամբ ճանապարհորդություն կապված բնության չխախտված տարածքների հետ, որը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, շրջակա միջավայրի վրա ունենում է «մեղմ» ազդեցություն, ապահովում է տեղացի բնակիչների ակտիվ սոցիալ-տնտեսական մասնակցությունը և նրանց կողմից այդ գործունեությունից առավելությունների ստացումը:

Էկոտուրիզմ՝ զբոսաշրջություն, որը իր մեջ ներառում է համեմատաբար անխախտ բնություն ունեցող վայրեր ճանապարհորդություններ տվյալ տարածքի բնական և մշակութա-էթնիկական առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով, որը չի խախտում էկոհամակարգի ամբողջականությունը և ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնց ներքո բնության ու բնական ռեսուրսների պաշտպանությունը արդյունավետ է դառնում տեղացի բնակչության համար:

Էկոտուրիզմի հիմնական սկզբունքները՝

- Ճանապարհորդություն դեպի բնություն, ընդ որում նման արշավների գլխավոր բովանդակությունն է ծանոթությունը բնության, տեղական սովորույթների և մշակույթի հետ:
- Բնական և սոցիալ-մշակութային բնույթի բացասական ազդեցությունների հասցնելը նվազագույնի, էկոլոգիական կայունության ապահովումը:
- Բնության պաշտպանությանը և տեղական սոցիալ-մշակութային միջավայրին աջակցելը:
- Բնապահպանական կրթությունը և իրազեկումը:

- Բնակիչների մասնակցությունը և տուրիստական գործունեությունից եկամուտների ստացումը, ինչը նրանց համար ստեղծում է բնության պահպանության տնտեսական խթաններ:
- Տնտեսական արդյունավետություն և ներդրում այցելության բնակավայրերի և տարածաշրջանների կայուն զարգացման գործում:

դ. Հնագիտական տուրիզմը.

Հանգստի հետաքրքիր տեսակ է, որը հասանելի է հարուստ պատմական ժառանգություն ունեցող բազմաթիվ երկրներում: Խոսքն այն տուրիզմի մասին է, երբ մարդիկ վճարում են դաշտում հնագիտական աշխատանքներին, պեղումներին մասնակցելու համար: Ցավոք, Հայաստանում ոլորտն ընդհանրապես զարգացած չէ, եթե չասենք՝ չկա: Հայաստանի, Կոտայքի մարզի և Զովունու հնագիտությունը չօգտագործված ռեսուրս է զբոսաշրջության զարգացման համար:

Զովունու տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ բնակատեղիներ, բերդեր, դամբարանադաշտ, գերեզմանատեղեր, դամբարաններ, քարայր-ապաստարաններ, որոնք հարմար են նույնիսկ նման հնագիտական աշխատանքներ և պեղումներ իրականացնելու համար:

Պետք է մշակվեն կոնկրետ ծրագրեր՝ կոնկրետ ժամկետներով ու հստակ օրակարգով: Դրանք կարող են լինել կարճաժամկետ կամ երկարաժամկետ, միանգամյա կամ պարբերական բնույթ կրել: Այս առումով մարզը և բնակավայրը ընտրության անսահման հնարավորություն է տալիս: Եվ քանի որ նույն հուշարձանը մի քանի տարի շարունակ պեղվում է, զբոսաշրջիկներն էլ կարող են ցանկության դեպքում ամեն տարի գալ ու շարունակել կիսատ թողած գործը:

Աշխարհի բոլոր անկյուններից մարդիկ կարող են գալ Հայաստան, հնագետների հետ միասին աշխատել դաշտում, սովորել, ինչպես նաև՝ առավել լայն ուսումնասիրել մեր երկիրը:

Ընդունող հուշարձանի «ենթակառուցվածքը» պետք է բավականաչափ զարգացած լինի հնագետ-զբոսաշրջիկներին ընդունելու համար: Պետք է գործնականում մտածել ու նախապատրաստել որոշակի պայմաններ, կազմակերպել և կարգավորել մարդիկ մնալու, սնվելու և այլ հարցեր:

ե. Քարանձավային տուրիզմը.

Տուրիզմի հատուկ տեսակ է, որը ենթադրում է ճամփորդություն երկրի ստորգետնյա բնական տարածություններով՝ քարանձավներով: Հանգստի այս տեսակը պահանջում է հատուկ գույք (պարան, լապտեր, սաղավարտ և այլն): Երթուղիները քարանձավներում բազմատեսակ են: Քարանձավային տուրիզմի առանձնահատկություններն են՝ անհարթ տարածությունը, բնական լույսի բացակայությունը և այլն: Իհարկե, պետք է մեծ խնամքով վերաբերվել, բնության կողմից մեզ պարգևած, այս հիանալի հուշարձաններին:

Զովունիում առկա են մի շարք քարայր-կացարաններ, որոնք գտնվում են գյուղից 0.5 կմ հս-աե, «Կարմիր բերդ» ամրոցից հս-ամ, Եղվարդ գետի աջ և ձախ ափերին: Քարայրները հավանաբար օգտագործվել է նաև միջնադարում: Դարաշրջանի հնագիտական նույնատիպ հուշարձանների բնորոշ օրինակներից է: Այստեղ հայտնաբերվել են աշելյա գործիքներ:

զ. Էքստրեմալ /արկածային/ տուրիզմը.

Վերջին ժամանակներում ակտիվ զարգանում է: Սա տուրիզմի մի տեսակ է, որը միավորում է ճանապարհորդության այն տեսակները, որոնք կապված են ակտիվ հանգստի հետ և, որոնց նպատակն է ստանալ նոր տպավորություններ և բարելավել ֆիզիկականը: Արկածային տուրիզմի առանձին տեսակ է էքստրեմալ տուրիզմը, որը գնալով դառնում է ավելի ու ավելի հայտնի ամբողջ աշխարհում: Այժմ Հայաստանում տուրիզմի այս տեսակը շատ զարգացած չէ, բայց կան բոլոր նախադրյալները այստեղ այն զարգացնելու համար: Վերջերս ամերիկյան National Geographic կազմակերպությունը կատարել է վիճակագրություն տուրիզմի վերաբերյալ և պարզ է դարձել, որ էքստրեմալ տուրիզմի լավ պայմաններ ունեցող երկրների մեջ Հայաստանը զբաղեցնում է 3-րդ տեղը: Այստեղ մասնավորապես կարելի է զարգացնել ալպինիզմը:

Զովունու տարածքում նպատակահարմար է էքստրեմալ տուրիզմի ցամաքային տեսակները.

- Մաունթինբայթինգ. վերջերս դարձել է շատ հայտնի: Սա հեծանվավազքն է միայն լեռնոտ, քարքարոտ և վտանգավոր ճանապարհներով: Փորձառու բայթերները կատարում են նաև տարբեր հնարքներ:
- Քարանձավագիտություն. Եթե դատենք այն բանով որ քարանձավագետներն այն մարդիկ են, ովքեր ազատ ժամանակ գնում են քարանձավներ, սա տուրիզմ է: Բայց միևնույն ժամանակ սա գիտություն է:
- X races՝ սա այն է որ էքստրեմալ զբոսաշրջիկները այնքան լավ են պատրաստված, որ կարող են ժայռեր մագլցել, ձիեր վարել, հեծանվով լեռներ բարձրանալ կամ էլ ջրվեժների վրայով իջնել: Այս մարդիկ թիմեր են կազմում և մասնակցում մրցույթների, որոնց նպատակն է հնարավորինս արագ հաղթահարել արգելքները: Սա նաև կոչվում է մուլտիսպորտ, կամ էլ արկածային մրցույթներ:

Լեռնային տեսակները: Ալպինիզմ՝ համարվում է ամենաէքստրեմալ հանգիստը: Որպես կանոն ալպինիզմով զբաղվողները նախընտրում են ամառը, քանի որ եղանակը թույլ է տալիս մինիմալ ուժերով հասնել նշանակված կետին: Չնայած կան նաև մարդիկ, ովքեր նախընտրում են ձմեռը: Եղանակի դժվար պայմանները միայն ավելացնում են ադրենալինը:

Օդային տեսակները: Զիփլայն՝ թույլ է տալիս էքստրեմալ սպորտի սիրահարներին ճոպանի և սեփական ձգողականության ուժի շնորհիվ մի վայրից հասնել մյուս վայրը: Զիփլայնի հաջողությանն է նպաստում նաև մեր երկրի ռելիեֆը՝ լեռներ, անտառներ, ձորեր, հստակ արտահայտված տարվա չորս եղանակներ, ինչը պակաս կարևոր չէ գեղագիտական տեսանկյունից:

Առաջարկվում է.

1. Զովունու պատմամշակութային հուշարձանների և Եղվարդ գետի կիրճի հիմքի վրա ստեղծել բնապատմական արգելոց:

Պատմամշակութային արգելոցները հուշարձանների այն համակառույցները, համալիրներն ու հուշարձանախմբերն են՝ իրենց շրջակա բնապատմական միջավայրով, որոնք պատմական, գիտական, գեղարվեստական, ազգագրական հատուկ արժեք են ներկայացնում: Պատմամշակութային արգելոցն ստեղծվում է հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների,

բնական և պատմականորեն ձևավորված արհեստական լանդշաֆտի, պատմամշակութային համալիրի և դրա պատմական միջավայրի պահպանության նպատակով:

Ցանկապատել, մաքրել և բարեկարգել կիրճի և հուշարձանների տարածքը: Ստեղծել հանգստի հարթակներ: Ստեղծել տարածքի և առանձին օբյեկտների արտաքին դեկորատիվ-գեղարվեստական լուսավորություն

2. Ապահովել բնակավայրի հուշարձանների տեղակայման ցուցանակների և համապատասխան բացատրագրերի տեղադրումը:


3. Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշարձանի տարածքը (որտեղ գտնվում է նաև թանգարանը) բարեկարգել, ընդլայնել և դարձնել զբոսայգի:

4. Բարեկարգել Երևան-Զովունի-Եղվարդ խճուղին համապատասխան մայթերով և ծառաշարքով, ապահովել արտաքին լուսավորություն: Բարելավել խճուղուն հարող հողամասերի ցանկապատերի արտաքին ճարտարապետական տեսքը:

5. Զբոսաշրջային գոտու մեջ կարելի է ընդգրկել նաև Եղվարդ գետի ձախ ափին՝ Քանաքեռավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող «Արի Ձոր» հանգստյան գոտին և Փոքր Մհեր կրթահամալիրի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանները:

6. Հյուրանոցային տնտեսությունների և հանրային սննդի կետերի կառուցում և վերագործարկում:

7. Լավ տարբերակ է բնակավայրից Եղվարդի գետի ուղղությամբ դեպի Հրազդանի կիրճ ճոպանուղու կառուցումը:



Նկար 8.6.1. Զբոսաշրջության զարգացման ուրվագիծ Եզրակացություն

Նախատեսվող աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ Զովունի բնակավայրի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: